



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Արցախը միասնական է եւ վաղուց ընտրել է իր ուղին

Վերջին 30 տարվա ընթացքում Արցախը դիտարկվում է որպես հայկական քաղաքական դաշտի ամենազդեցիկ գործոն: Այս ժամանակահատվածում Արցախյան պայքարն իր մեջ խտացրել է հայ ժողովրդի իդեալների իրականացման առարկայական իրողությունը եւ այդ հանգամանքից էլնելով՝ դարձել հայկական ներուժի կենտրոնացման կիզակետ: Պատահական չէ, որ Հայաստանի վերանկախացման շրջանում պետական համակարգում ձեւավորվող ընտրախավում Արցախյան շարժման ակունքներում կանգնած անձնավորություններ են եղել, իսկ 1998թ. իշխանափոխության հիմնական գործոնը եղել է Արցախյան հարցի վերաբերյալ դիրքորոշման տարակարծությունը:

Ժամանակի ընթացքում Արցախյան հիմնահարցի վերաբերյալ ընտրախավի տեսակետների հստակ արձարծումն ու ներկայացումը կորցրել են իրենց կարեւորությունը՝ իրենց տեղը զիջելով քաղաքական կողմնորոշման ուղենիշ դարձած քաղքենի ապրելակերպ քարոզող «լավ ապրելու» լոզունգին: Այնուամենայնիվ, 2020թ. պատերազմը եւ հայկական կողմի կրած պարտությունն ապացուցեցին, որ քաղքենիությանը տրված քաղաքական դիրքորոշումները մեր պետականությունն ու ազգային արժեքները, ըստ ամենայնի, կործանման ուղու վրա են դնում:

Վերը նշվածի հիման վրա՝ վերջին օրերին Հայաստանի ընդդիմության կողմից սկսված Արցախի օրակարգը Հայաստանի քաղաքական բեմի առաջին օրակարգ դարձնելու գործընթացն արդարացված է: Դրա միջոցով նախ եւ առաջ կասեցվում է հայկական պետության պարտության հետեւանքով առաջացած արժեքային համակարգի անկումը: Անշուշտ, այստեղ կարեւորվում է նաեւ Արցախի տեսակետը եւ մոտեցումների հանրայնացումը հայաստանյան դաշտում: Այդ առումով մինչ այժմ ապարդյուն են եղել ՀՀ իշխանությունների կողմից կիրառված այն քարոզչական հնարքները, ըստ որոնց Արցախի ժողովրդի եւ իշխանությունների դիրքորոշումները համընկնում են ՀՀ իշխանությունների որդեգրած քաղաքականությանը: 2022թ. ապրիլի 14-ին ԱՀ Ազգային ժողովը հրապարակել է հայտարարություն, որտեղ պարզորոշ կերպով կոչ է արել ՀՀ իշխանություններին «հրաժարվելու իրենց ներկայիս աղետալի դիրքորոշումից», որին միացել են հասարակական ու քաղաքական այլ ուժեր եւս: Այնուամենայնիվ, ՀՀ իշխանությունները եւ նրանց կից ու արբանյակ լրատվամիջոցները, «խաղաղություն» բառը լսելով, ոգեւորվում են եւ փորձում են անտեսել ՀՀ իշխանություններին ուղղված զգաստացման՝ Արցախի միասնական կոչը:

ԱՀ Ազգային ժողովի ապրիլի 14-ի հայտարարությունից հետո Արցախի պետական, հասարակական գործիչներն ու Ազգային ժողովի պատգամավորները բազմիցս անդրադարձել են կոչի յուրաքանչյուր դրույթին ու մոտեցումների սկզբունքայնությանը: Արցախում տիրող այս միասնական մթնոլորտը բազմապատկում է Արցախի վճռական խոսքի ուժն ու արժեւորում այն հայկական քաղաքական դաշտում:

Այսօր նշված հայտարարության ոգով եւ սկզբունքներով է առաջնորդվում նաեւ ՀՀ ընդդիմության եւ հասարակական լայն շրջանակների կողմից սանձազերծված պայքարը: Ուստի պետք է արձանագրել, որ ի հեճուկս թուրք-ադրբեջանական հոխորտանքների եւ նրանց քաղաքականությանը նպաստող կեղծ «խաղաղություն» ջատագովների, ՀՀ-ում ձեւավորվող լայնամասշտաբ հասարակական-քաղաքական շարժումն ու Արցախը բնական դաշնակիցներ են:



Լաւն գարթնել է. ՀՀ խորհրդարանական ընդդիմությունը պայքարը շարունակում է փողոցում

Հայաստանի Հանրապետությունում ապրիլի 23-ին՝ Հայոց ցեղասպանության 107-րդ տարելիցի կապակցությամբ կազմակերպված «Չարթնի՛ր, լա՛ն» խորագրով ջախերով երթ կազմակերպելով՝ ընդդիմությունը փաստացի ազդարարեց օրվա իշխանություններին հեռացնելու նոր գործընթաց սկսելու մասին:

ՀՀ ԳՄ ներկայացուցիչ Իշխան Սաղաթելյանը ապրիլի 23-ին՝ ջախերով երթի մեկնարկից առաջ հայտարարեց համահայաստանյան գորաշարժ ու դիմադրություն սկսելու մասին, իսկ նախօրեին՝ ապրիլի 22-ին, ուղերձով դիմեց ժողովրդին եւ համառոտ ներկայացրեց Փաշինյանի իշխանության հեռացմանն ուղղված քայլերի ու գործողությունների ծրագիր-ժամանակացույցը:

«Հիմա արդեն գործի ժամանակն է: Ես եկել եմ այստեղից հայտարարելու, որ մենք մեր թիմով, մեր ամբողջ ռեսուրսով, մեր հազարավոր հայրենակիցներով եւ աջակիցներով դուրս ենք գալիս փողոցային պայքարի, իջնում ենք փողոց այս ազգադավ եւ ազգակործան իշխանություններին հեռացնելու նպատակով...»

Մենք ամբողջ աշխարհին պետք է ցույց տանք եւ ապացուցենք՝ մենք տեր ենք Արցախին, մենք տեր ենք մեր պետականությանը եւ տեր ենք հայ ժողովրդի ապագային, որի համար պատրաստ ենք պայքարել, իսկ ապրիլի 25-ից մենք ամբողջ Հայաստանով սկսում ենք անդադար բողոքի ակցիաներ, քայլեր եւ գործողություններ:

Նախ, ապրիլի 25-ից սկսած, Հայաստանի մարզերից՝ չորս խորհրդանշական վայրերից, քայլերով կշարժվեն դեպի մայրաքաղաք Երեւան: Այդ ընթացքում, ապրիլի 25-ից սկսած, յուրաքանչյուր օր Երեւանում տեղի կունենան տարբեր ակցիաներ, քայլեր, գործողություններ եւ երթեր: Մենք մեր ամբողջ ծրագրի մասին յուրաքանչյուր օր ամենամյա ռեժիմով ձեզ կտեղեկացնենք:

Սա սրբազան պայքար է, սա պայքար է հանուն Արցախի եւ Հայաստանի, հետեւաբար՝ նահանջի տեղ չունենք, այլընտրանք չունենք, գնում ենք մինչեւ վերջ եւ հաղթանակում:

Հենց հիմա այս խորհրդանշական վայրից հայտարարում եմ՝ սկսում ենք»:

Արդեն ապրիլի 25-ին Աժ «Հայաստան» խմբակցության պատգամավոր, Աժ փոխխոսնակ Իշխան Սաղաթելյանի իր ֆեյսբուքյան էջում գրառում է կատարել՝ տեղեկացնելով սպասվող բողոքի ակցիաների մասին:

«Սիրելի հայրենակիցներ, մենք հայտարարել ենք, որ զանգն արդեն հնչել է, եկել է գործելու ժամանակը: Տեղեկացնում եմ, որ առավոտյան ժամը 11:00-ին Իջեւանից Հայաստանի արժանապատիվ քաղաքացիները կսկսեն իրենց երթը դեպի Երեւան: Առաջիկայում նման երթեր կմեկնարկեն Հայաստանի այլ մարզերից եւս»,- գրել է պատգամավորը:

պեյանը, ով ազդարարել է հանուն հավերժական Հայաստանի երթի մեկնարկի մասին:

«Սա խորհրդանշական ու պատմական մի հանգրվան է: Իմ թիկունքում ծածանվում են Արցախի եւ Հայաստանի հանրապետությունների դրոշները, եւ մենք կշարժվենք դեպի Երեւան»,- ֆեյսբուքյան ուղիղ եթերում ասել է Ասպրամ Կրպեյանը:

Երթի մեկնարկին զուգահեռ իրագրվում են բողոքի ակցիաներ սկսվեցին իրականացվել նաեւ հանրապետության սրտում՝ քաղաք Երեւանում: Երեւանի Ս. Հերացու անվան Հայաստանի պետական բժշկական համալսարանի բակում մի խումբ երիտասարդներ տեղադրել են Արցախի դրոշը, ինչպես նաեւ երիտասարդները երեւանյան 15 բուհերում միաժամանակ կոչով դիմել են ուսանողներին՝ «Ուսանո՛ղ, գարթնի՛ր»:

44-օրյա պատերազմի ընթացքում Մատադիսում գրիված ավագ լեյտենենտ Լեւոն Ավետիսյանի հայրը ապրիլի 25-ին հացադուլ է հայտարարել մինչեւ մայիսի 8-ը: Նա Ազատության հրապարակում լրագրողների հետ զրույցում ասաց, որ պահանջում է ՀՀ դատախազությունից եւ ԱԱԾ-ից՝ ձերբակալել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին:

Երեւանի Սուրբ Խաչ եկեղեցուց ապրիլի 25-ին մեկնարկել է ընդդիմության «Չարթնի՛ր, լա՛ն»՝ «Դիմադրության» շարժման երթը: Երթի մասնակիցները վանկարկում էին՝ «Առանց Նիկոլ Հայաստան», «Առանց թուրքի Հայաստան», «Հայաստան ոտքի», «Արցախ ոտքի», «Հայ ազգ ոտքի», «Միացում»: Երթի մասնակիցները երբ հասան Հանրապետության հրապարակ, ողջունեցին այնտեղ անժամկետ ստացույց անող Արթուր Վանցյանին եւ մեր մյուս հայրենակիցներին:

Ապրիլի 26-ին Տիգրանաշենից մեկնարկել է «Դիմադրության» շարժման քայլերթի երկրորդ ուղղությունը, որի մասին հայտարարել էր ՀՀ Արարատի Մարզային կոմիտեի ներկայացուցիչ Գերասիմ Վարդանյանը:

«Մենք սա խորհրդանշական ենք համարում՝ եկել ենք Տիգրանաշենից սկսելու եւ ասելու, որ սա հայկական հող է եւ թուրքին չենք զիջելու»,- ասաց նա:

Գերասիմ Վարդանյանը նշեց, որ երեւանցի գյուղը եւ լեռը այն կետերից է, որ Նիկոլը համարում է արդբեջանական, երբ ասում է, որ Հայաստանում կան արդբեջանական տարածքներ:

Ապրիլի 26-ին Կոմիտաս Գյուլբենկյան խաչմերուկում ՀՀ Երիտասարդական միության անդամները խաղաղ ակցիա են իրականացրել՝ անվադողերով փակելով Կոմիտասի պողոտան, որից հետո մի խումբ ոստիկաններ շրջափակել են Արամ Մանուկյան շենքը, այնուհետեւ բերման են ենթարկել շենքից դուրս եկող երիտասարդներին:

Ապրիլի 26-ին «Դիմադրության» շարժման երկրորդ իրագրված երթն է ընթացել Երեւանում, այս անգամ՝ Սասունցի Դավիթ արձանի կողքից: → 2

Ոչ Հայաստանի թուրքացմանը, ոչ Արցախի հայաթափմանը՝ սա է մեր որդեգրած կարգախոսը. Հակոբ Տեր-Խաչատուրյան

Օրերս, որպես ՀՀ-ի նորընտիր Բյուրոյի ներկայացուցիչ, Հակոբ Տեր-Խաչատուրյանն իր առաջին աշխատանքային այցելությունն է կատարել Լիբանան, որտեղ «Վանա ձայն» ռադիոէթերի ժամանակ խոսել է Հայաստանի և Արցախի վերջին իրադարձությունների, ՀՀ իշխանությունների վարած արտաքին քաղաքականության, Արցախի և արցախցիների անվտանգության երաշխիքների մասին:

- Այս դժվարին օրերին և աշխարհաքաղաքական բարդ պայմաններում մեր ժողովուրդն ու հայրենիքը պարունակում է ճակատագրական օրեր: Ըստ երեւոյթին, ավելի քան 2 տարվա բողոքի շարժումները, քաղաքական պայքարն ի վերջո վերածվել են համաժողովրդական պայքարի և հնչել է համազգային դիմադրության կոչը՝ «Չարթնիր, լաո»-ն: Ո՛ւմ է ուղղված այս կոչը և ինչ նպատակ է հետապնդում այն:

- Կասկած չկա, որ Հայաստանում մենք, որպես ՀՀ, հստակորեն համոզված ենք, որ այս պարտվողական դեկլարությունը, որն իր էությունով է պարտված և արցախյան 44-օրյա պատերազմից հետո շարունակաբար միակողմանի գիշումների մոտեցումներով է կլանված, անհրաժեշտ է, որպեսզի հեռանա իշխանությունից: Մեր բոլոր աշխատանքները տարվում են ոչ միայն պարզապես իշխանություն փոխելու, այլ մոտեցումներ փոխելու համար, որովհետև այն վիճակը, որի մեջ գտնվում են Հայաստանի իշխանությունները, այն բանակցությունները, որոնք փորձում են վարել մի քանի ճակատներում, միայն ու միայն հիմնված են միակողմանի գիշումների վրա, որ ինքնին ազգակործան մոտեցում է: Այդ իսկ առումով հայրենիքը փրկելու հարց գոյություն ունի, Արցախը հայաթափման վտանգից հեռու պահելու խնդիր գոյություն ունի, և ընդհանրապես՝ օրակարգում այս վերջին 2 տարիներին Հայաստանի անվտանգության խնդիրն է ի հայտ եկել: Այդ հարցը անկախության առաջին տարիներից մինչև 2020թ. այդպես սուր արտահայտություն է ստացել, բայց հիմա Հայաստանի անվտանգությունն էլ խնդրո առարկա է:

Մենք, որպես ՀՀ Դաշնակցության և հատկապես մեր հայաստանյան կազմակերպությունը, պետք է կենտրոնանանք այդ դիմադրական շարժումը համախմբելու վրա: Մենք կարողացանք դառնալ ընդդիմությանը համախմբող մղիչ ուժն ու կորիզը, բայց միեւնույն ժամանակ գիտակցում ենք, որ խորհրդարանական հարթուքը միակը չէ, որտեղ այդ պայքարը պետք է մղվի, այլ անհրաժեշտ է, որպեսզի ժողովուրդն արթնանա, և «Չարթնիր, լաո» կոչը հենց այդ ժողովրդին է ուղղված: Դանակն այլևս ոսկորին է հասել, այլևս այնպիսի նոր գիշումների հեռանկար կբացվի, այնպիսի պարտվողական քաղաքականություն կքարոզվի և այնպիսի մոտեցումներ կիրառվեն:

Վի և այնպիսի մոտեցումներ կիրառվեն ժողովրդին՝ որպես միակ այլընտրանք, որ պարզապես անընդունելի է մեզ համար: Ուստի, մենք ինչու ունենք, որ ժողովուրդը կարթնանա, իսկ մենք պարտաւորաբար ենք համագործակցելու բոլոր առողջ ազգային ուժերի հետ, որպեսզի Հայաստանը վերադարձնի իր արժանապատվությունն ու իրեն պաշտպանելու ունակությունը, որովհետ մենք միշտ հավատացել ենք, որ հայկական ներուժի վրա պետք է դնենք մեր հույսը, որպեսզի ոչ արտաքին ճնշումների, ոչ էլ ներքին պարտվողական հոգեբանության գոհ չգնա մեր հայրենիքը:



- Ապրիլի 22-ին, երբ որ Իշխան Սաղաթեյանը հայտարարեց պայքարի մասին, բոլորս էլ ակնատես ենք լինում, որ նկատվում են փոփոխություններ, կան քայլերձեռ, հավաքների մասնակիցների թիվն է ավելանում, ոգևորությունն է ավելացել, սակայն երբ որ ստում էք համաժողովրդական պայքար, մարդիկ հարցնում են, թե ի՞նչ էք հասկանում համաժողովրդական պայքար ստելով և մինչև ո՛ւր կարող է հասնել այդ պայքարը՝ ըստ ՀՀ Դաշնակցության:

- Հիմնականում մեկ դժվարություն կա, որ այս իշխանությունները որդեգրել են խաղաղության դարաշրջանի բողոքի տակ թաքնվելու հատուկ քաղաքականություն: Մենք բոլորս էլ գիտակցում ենք, որ խաղաղությունը ցանկալի է բոլորիս համար, սակայն այդ խաղաղության գինն է կարելու: Երբեք պարտված պետության մեջ խաղաղության ձգտումը լավ տեղ չի տանում: Դա նշանակում է, որ պարտադրված խաղաղությունը պետք է լինի, իսկ մեր հարեւանները՝ ե՛ւ Թուրքիան, ե՛ւ Ադրբեջանը լավ գիտեն՝ ինչպես գործեն, երբ ընկճված են Հայաստանի իշխանությունները: Այս պարագայում ամենակարեւորը ժողովրդին հասկացնելն է, որ որտե մեկը խաղաղության դեմ չէ, որ սուտ են կեղծ է այն տեսակետը, թե միայն իշխանությունն է միակ խաղաղության պաշտպանը, իսկ ընդդիմությունը պատերազմի կոչեր է

անում: Դա այդպես չէ, պարզապես մենք արժանապատիվ խաղաղության կողմնակից ենք և ոչ թե՛ ամեն գնով խաղաղության, որին կարող են գոհ գնալ Հայաստանի սահմանները, Արցախի հիմնահարցը:

Մենք աշխատանք ենք տանում, որպեսզի ժողովուրդը հասկանա, որ այդ կեղծ օրակարգերից հեռու գնալով՝ պետք է կենտրոնանանք իրականի վրա: Եական այն է, որ այսօր Հայաստանի անվտանգությունն առաջնահերթ է, Արցախում հայաթափման հարց կա և անհրաժեշտ է ստեղծել համահայկական միասնականություն, որպեսզի կարողանանք թշնամուն դիմակայել բոլոր ճակատներում՝ թե՛ հայրենիքում, թե՛ աշխարհում: Որտե մի իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ է պայքար, քրտինք, երբեմն էլ՝ արյուն: Երբ Ադրբեջանը ցինիկորեն հայտարարում է, որ լուծել է Արցախի հարցը և չի ուզում անգամ անդրադառնալ այդ հարցին, երբ Արցախի հարցը բանակցություններն անընդհատ հետաձգվում են, այդ ամենի մեջ հանկարծ բացել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցը, բնականաբար պետք է գրգռի թշնամու ախորժակը և նա փորձի առավելագույնն ստանալ:

Մենք երբեք դեմ չենք եղել, որ որպես դրացի պետություններ, օրերից մի օր կարգավորվեն մեր հարաբերությունները, սակայն հանուն ինչի՞՞ եւ ինչո՞ւ այս բարդ ժամանակահատվածում, երբ ունենք մի շարք հատուկ ճակատներում աշխատանքներ տանելու անհրաժեշտություններ, եւ այս ամենը փորձել լուծել մեկ ընդհանուր մեծ հասկացողության մեջ, որն իրականում պատրանք է:

- Այս պարագայում, Հայաստանի անվտանգության, պետականության և տարածքային ամբողջականության հետ կապված՝ Դաշնակցության ունի՞ կարմիր գծեր: Որո՞նք են այդ կարմիր գծերը, որ ձեր կարծիքով այս իշխանությունները հասել կամ արդեն անցել են, որի պատճառով այս համաժողովրդական պայքարն է սկսել:

- Մենք մեր կարմիր գծերը հստակորեն ճշտել ենք: Առաջինը, որ սահմանադրաման- սահմանագծման հարցում այս իշխանությունները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն Հայաստանի տա-

րածքային ամբողջականության հարցին, սակայն այնպես են դնում հարցը, որ 2 կմ այս կողմ, 2 կմ այն կողմ՝ ի՞նչ տարբերություն, միևնույն Ադրբեջանը ոչ թե միայն կմ-ով, այլ ուղղակի Հայաստանի տարածքների վրա է իրեն տեղավորում: Ադրբեջանը խոսում է անկլավների և Եսկլավների մասին, երբեմն մարդկանց բռնի տեղահանելու մասին և այդ ամենը անտեսած անմեղսունակ միամտությամբ առաջ գալիս իսկապես սարսափելի երեւոյթ է: Այս ուղղությամբ մեր կարմիր գծերից մեկն այն է, որ Հայաստանի տարածքային ամբողջականության առումով չափազանց զգուշությամբ պետք է մոտենալ սահմանագաման-սահմանագծման հարցին, իսկ մյուսն էլ, որ ավելի կարելու է, որ այդ սահմանագաման ժամանակ Ադրբեջանը չպարտադրի ճանաչել իր տարածքային ամբողջականությունը, որի հետ մեկտեղ իրենց պատկերացումներով թաղել նաեւ Արցախի հիմնահարցը: Այս 2 կետերը չափազանց կարեւոր է, եւ շատ ցավալի է, որ այն 5 սկզբունքային կետերը, որի մասին հայտարարել է Ադրբեջանը, Հայաստանը առանց մանրամասն քննարկումների հայտարարել է, որ սկզբունքորեն խնդիր չունի այդ կետերի հետ: Սկզբունքորեն խնդիր չունենալ այլ հարց է, մանրամասն քննարկել է պարզել թշնամու իրական միտումները՝ այլ հարց:

- Բոլորս հետևում ենք, թե ինչպես Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման ուղղությամբ բանակցություններ են տեղի ունենում, հաշորդն արդեն մայիսի 3-ին պետք է լինի: Նաեւ այլ ճակատի վրա Հայաստան-Ադրբեջան բյուրեցյան ձեւաչափով խորհրդակցություններ են տեղի ունենում: Դաշնակցությունը ի՞նչ վերաբերմունք է ի՞նչ ակնկալություններ ունի այս բանակցություններից:

- Անշուշտ, բառերի խախտում գոյություն ունի, որովհետեւ իշխանությունները երբեմն ասում են, թե պարզապես հարաբերությունների մշակում է, կարծիքների փոխանակություն է, անպայման բանակցություն է, սակայն անկախ նրանից, թե ինչ ձեւաչափով է տեղի ունենում այդ ամենը, հստակ է, որ գործընթաց գոյություն ունի:

Հայաստան-Թուրքիա բանակցությունների վերաբերյալ մենք արդեն մի քանի մոտեցումների մասին հայտարարել ենք: Միամիտ է ենթադրել, որ Թուրքիայի կողմից ժխտողականության մասնագետ դիվանագետ է նշանակվում, որ երկար տարիներ Թուրքիայի համար շատ կարելու երկրում դեպպան է եղել, իսկ դիմացը մենք ունենք անփորձ մեկին, ով բարի տրամադրություններով, սակայն միամտաբար է մոտենում հարցին: Սա արդեն մտահոգիչ է, իսկ թուրքերը շատ գոհ են իրենց հետ բանակցող կողմից նշանակված ներկայացուցիչը:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Լաոն գարթնել է. ՀՀ խորհրդարանական ընդդիմությունը պայքարը շարունակում է փողոցում

1 «Տարբեր ակցիաների ժամանակ ոստիկանությունը դիմում է բիրտ ուժի. ունենք ձեռքարկվածներ: Ընդամենն ասում ենք՝ դուք չեք կարող այսքան մարդու ձեռքարկել, մենք պայքարի դուրս գալուց առաջ ասել ենք՝ պատրաստ ենք ամեն ինչի ու գնալու ենք մինչև վերջ»,- ասաց Իշխան Սաղաթեյանը:

Երթի մասնակիցները դատախազության մոտ միացան նահատակված հերոսների հարյուրավոր ծնողներին, ովքեր արդարություն և արդարադատություն են պահանջում ՀՀ իրավապահ մարմիններից:

Ապրիլի 27-ին Գարգեթի Նժդեհի հրապարակից մեկնարկեց «Չարթնիր, լաո»՝ «Դիմադրություն» շարժման իրազեկման բազմամարդ երթը: Երթից առաջ ՀՀ-ի ԳՄ ներկայացուցիչ Իշխան Սաղաթեյանը կրկին կոչ արեց դիմադրության նոր օջախներ ստեղծել, այդպիսով աջակցել համընդհանուր պայքարին, իսկ բողոքի ակցիաներին հեռակա հետեւող քաղաքացիներին՝ միանալ օրեցօր մեծացող շարժմանը:

Ապրիլի 28-ին մեկնարկել են «Դիմադրության» շարժման երթերը Ապարանից և Սարդարապատից:

«1918-ի մայիսին այստեղ կենաց մահու կռիվ էր հանուն Երեւանի, սուրբ Էջմիածնի, Հայաստանի, հայ տեսակի: Հիմա էլ նույնն է՝ 104 տարի հետո: 1918-ին այստեղ ամենախիզախները արցախցիներն էին՝ Բեկ-Փի-

րումյանները, Դարբազի 5-րդ (մահապարտների) գունդը: Այսօր էլ մեր հերթն է՝ Սարդարապատից՝ հանուն Արցախի»,- Սարդարապատից երթի մեկնարկին ասել է Գեղամ Մանուկյանը:

Բաշ Ապարանից մեկնարկած «Դիմադրության» շարժման քայլերթի երրորդ ուղղության հետ դեպի Երեւան է գալիս նաեւ ԱԾ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Խաչատրյանը:

«Բոլոր քաղաքացիներին, ում փորձում են խաբել՝ իբրեւ թե այս ուժերը թե՛ գանձ՝ դրանք կբերեն պատերազմ, ո՛չ, միայն մենք կկարողանանք ապահովել Հայաստանի անվտանգությունը, կկարողանանք ապահովել խաղաղություն Արցախում, Հայաստանի Հանրապետության սահմաններին և ներդաշնակություն ՀՀ ներսում»,- նշեց «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Խաչատրյանն ու հավելեց՝ ուրեմն, զարթնիր, լաո, դեպի առաջ, դեպի հզոր և միացյալ Հայաստան:

Օրեցօր, իրազեկման երթերի բազմամարդ դառնալուն զուգահեռ, քաղաքացիները պատշգամբներից, մեքենաներից ողջունում և տարբեր համայնքներում միանում են աղ ու հացով էին դիմավորում Իշխանից և Տիգրանաշենից մեկնարկած երթի մասնակիցներին:

Ապրիլի 29-ին Արամ Մանուկյանի արձանի մոտից

մեկնարկել է «Չարթնիր, լաո»՝ «Դիմադրության» շարժման իրազեկման հերթական բազմամարդ երթը:

«Մայիսի 1-ին Ֆրանսիայի հրապարակում սեւեր ու սպիտակներ չեն լինելու: Մենք մերժում ենք ժողովրդի համար զգվելի դարձած այդ իրականությունը և փախուստ պառակտվածությունների ու անհանդուրժողականության էջը: Այսօրվանից մենք միասնական ենք: Եվ դուք դա կտեսնեք մայիսի 1-ին: «Դիմադրության» շարժման իրազեկման երթը վաղը եւս տարբեր ակցիաներ կկազմակերպի, բայց առանձին երթ չի իրականացնի. վաղը հանդես կգանք մամուլի առկիսով»,- երթի ավարտին հայտարարեց Իշխան Սաղաթեյանը:

Նշենք, որ Հայաստանի խորհրդանշական 4 կողմերից՝ Իշխանից, Տիգրանաշենից, այսօր արդեն՝ Սարդարապատից ու Բաշ Ապարանից արժանապատիվ քաղաքացիները քայլերթերով շարժվում են Երեւան, որպեսզի մայիսի 1-ին միանան համազգային հանրահավաքին: Չուզահեռ՝ Երեւանում անցկացվել են ամենօրյա ապակենտրոն իրազեկման և անհանազանության ակցիաներ ՀՀ, ՀՀԿ, Հայրենիք կուսակցությունների, ինչպես նաեւ ՀՀԿ ՀԵՄ-ի, ՀՀԿ ՆԱՌՄ-ի, «Երիտասարդի ձայն» նախաձեռնության, Ազատագրական շարժման, պատգամավորների և քաղաքացիների կողմից:

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2021թ. պետությանը պատճառված վնասի չափը կազմել է ավելի քան 728 մլն ՀՀ դրամ

Ապրիլի 28-ին գումարվել է Արցախի Հանրապետության Ազգային ժողովի 7-րդ գումարման 5-րդ նստաշրջանի հերթական նիստը: Օրակարգում ընդգրկված պարտադիր քննարկման ենթակա հարցերից «ԱՀ դատախազության 2021թ. գործունեության մասին հաղորդումը» ներկայացրել է ԱՀ գլխավոր դատախազ Գուրգեն Ներսիսյանը:

«2021 թվականին Արցախի Հանրապետության տարածքում արձանագրվել է հանցագործությունների 1711 դեպք, 2020թ. ունեցել ենք 1281, 2019թ.՝ 952 դեպք: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ՝ հանցագործությունների թիվն աճել է 33,6%-ով, 2019թ. համեմատությամբ՝ գրեթե 80%-ով: Հանցավորության շարժընթացի վերլուծությունը ցույց է տալիս, որ 2020 թվականի համեմատությամբ աճել է միայն ոչ մեծ եւ միջին ծանրության հանցագործությունների թիվը: 2021թ. գրանցվել է ծանր եւ առանձնապես ծանր հանցագործությունների 150 դեպք, որը կազմում է ընդհանուր հանցավորության 8,8 %-ը (2020թ.՝ 164 , կամ 12,8%-ը, 2019 թվականին՝ 66, կամ 6,9 %-ը)»,- իր զեկույցում ընդգծել է գլխավոր դատախազը:

2021 թվականին իրավապահ մարմինների կողմից հարուցված գործերով վեր հանված պետությանը պատճառված վնասի ընդհանուր չափը կազմել է ավելի քան 728 մլն ՀՀ դրամ /2020թ.՝ 20մլն 79 հազ. 791 ՀՀ դրամ/, որից վերականգնվել է 255 մլն.500 հազ. ՀՀ դրամը:

Գուրգեն Ներսիսյանը հավաստիացրել է, որ շարունակելու են հետեւողականորեն գործել դատախազության արդյունավետությունը բարձրացնելու, օրինականություն հաստատելու, հանրության հետ հարաբերությունները եւ փոխգործակցությունը զարգացնելու ուղղությամբ:

Հաջորդիվ նիստի օրակարգում ընդգրկված 1 տասնյակից ավելի օրինագծերի քննարկումն էր, որոնք միաձայն ընդունվել են: Խորհրդարանի քննարկման է ներկայացվել «Սահմանապահ գործերի մասին» օրինագիծը: Այն 28 կողմ ձայնով ընդունվել է առաջին ընթերցմամբ:

Առաջին ընթերցմամբ ներկայացված «Պետական սահմանի մասին» օրենքի նախագիծն պատգամավորները քվեարկել են 23 կողմ, 3 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ:

Կառավարության հետ հարց ու պատասխանի ժամին 2 տասնյակից ավելի հարցեր են հնչեցվել 15 պատգամավորների կողմից:

Նիստն ամփոփվել է պատգամավոր Մետաքսե Հակոբյանի հայտարարությամբ:

Արցախի տարածքային ամբողջականությունը կասկածի տակ դնելը կարող է քրեականացվել օրենսդրական փոփոխություններով

Ազգային ժողովի հերթական նիստի ընթացքում դատախազին հարց է ուղղել նաեւ ԱՀ ԱԾ «Հայ եղափոխական դաշնակցություն» խմբակցության պատգամավոր Դավիթ Իշխանյանը: Նա մատնանշել է ՀՀ տարբեր քաղաքական, պետական գործիչների կողմից այնպիսի մտքերի արտահայտումը, որոնք, ըստ պատգամավորի, միտված են Արցախի տարածքային ամբողջականությունը, վարչատարածքային ընդհանուր պատկերը հարցականի տակ դնելուն: «Ու-

նենք Սահմանադրություն, վարչատարածքային բաժանման մասին օրենք, վերջերս ընդունել ենք «Բռնազավթված տարածքների մասին» օրենք: Այս առումով արդյո՞ք որոշակի քննարկումներ եւ իրավական գործընթացներ ընթանում են», - հարցրել է նա:

Ի պատասխան՝ Գուրգեն Ներսիսյանը նշել է, որ նմանատիպ երեւոյթներին որպէս հայ, որպէս արցախցի, ինքն ունենում է անձնական գնահատականներ, այդ մտահոգություններով կիսվում է ՀՀ իր գործընկերը հետ: «Սակայն պարփակված ենք մեր դատախազական լիազորություններով, եւ ինչպէս ՀՀ-ում, այնպէս էլ Արցախում քրեական օրենսդրությունը տարածքային ամբողջականության դեմ ուղղված ոտնձգությունները քրեորեն հետապնդելի է ճանաչում միայն տարածքային ամբողջականությունը բռնի զավթելու հրապարակային կոչերի կամ զինված գաղտնի գործողություններ կատարելու կապակցությամբ: Քննարկումներ, մտահոգություններ ունենում ենք, բայց դրանք բացա-

Արցախի ճակատագրից է կախված համայն հայության ճակատագիրը. Դավիթ Բաբայան

«Բոլորն էլ քաջատեղյակ են մեր դիրքորոշման մասին, որը չի փոխվել: Բոլորն էլ գիտեն՝ մենք ինչ ենք ուզում, բոլորն էլ գիտեն, որ «կարմիր գծեր» կան, եւ հնարավորինս պետք է հեռու լինենք տարբեր տիպի սպեկուլյացիաներից, ժեխերից, դարաբաղյան բարբառում ավելի լավ խոսք կա «ժախճներից» (մուլախոտ): «Ժախճը» կապ չունի. ե՛ւ այստեղ է աճում, ե՛ւ այնտեղ: «Ժախճները» խոսում են, եւ մենք դա կարող ենք հիմք ընդունել, մեկը հարձակվի մեզ վրա», - այս մասին ապրիլի 28-ին կայացած Ազգային ժողովի նիստի ժամանակ նշել է ԱՀ արտաքին գործերի նախարար Դավիթ Բաբայանը՝ պատասխանելով պատգամավոր Մետաքսե Հակոբյանի հարցին:

Պատգամավորը հետաքրքրվել է, թե Արցախի Հանրապետության համար ԱՀ ԱԳՆ ղեկավարը ի՞նչ վտանգներ է տես-

ցում Արցախում այլ տեսակետ չկա:

Արձագանքելով հնչած պատասխանին՝ պատգամավոր Մետաքսե Հակոբյանը հարցրել է, թե ինչքանով Արցախն այս ամենի մեջ դերակատարություն ունի: Նա հետաքրքրվել է, թե այդ հարցը ԱՀ ԱԾ նախագահը քննարկե՞լ է արդյոք ՀՀ իր գործընկերոջ հետ հանդիպման ժամանակ: «Ի վերջո, Արցախը կա՞ այս ամենի մեջ, գոնե խորհրդատվային հարթակում, թե՞ մենք ուղղակի սպասողի դերում ենք», - նշել է պատգամավորը:

ԱՀ ԱԾ նախագահ Արթուր Թովմասյանի խոսքով՝ Արցախի խորհրդարանի բոլոր 5 խմբակցությունների ղեկավարների դիրքորոշումն այն է, որ սահմանագծում եւ սահմանագատումը չի վերաբերելու Արցախին: «Կարմիր գիծը սա է: 2020թ. նոյեմբերի 9-ի հայտարարությամբ կար Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի մասով հարց: Դա տրված է ՀՀ իշխանությանը, Ադրբեջանի Հանրապետության իշխանությանը: Ադրբեջանի նախագահը կարող է ասել, թե Արցախի հարցը լուծված է, եւ ասում է, որ չկա Լեռնային Ղարաբաղի հարց: Սա ո՛չ ՀՀ, ո՛չ Ադրբեջանի առաջնորդների իրավունքների մեջ չի մտնում: Արցախի կարգավիճակի հարցը ԵԱՀԿ Մինսկի խմբի մանդատին է տրված: ԵԱՀԿ Մինսկի խմբի մանդատին հավանություն են տվել պաշտոնական Բաքուն, Երեւանը եւ Ստեփանակերտը: Առայժմ ոչ մեկը չի հրաժարվել ԵԱՀԿ Մինսկի խմբից: Արցախի կարգավիճակի հարցը, երբ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները մեզ առաջարկեն, մենք մեր ժողովրդի հետ այն քննարկելու ենք», - ասել է ԱՀ ԱԾ նախագահը:

Անդրադառնալով Ադրբեջանի կողմից ներկայացված 5 առաջարկներին՝ Դավիթ Բաբայանը նորից կրկնեց՝ 5 կետ կլինի, 7, թե 17, մենք ունենք միայն մեկ կետ՝ չենք լինելու Ադրբեջանի կազմում: «Մենք շարունակելու ենք դե ֆակտո լինել անկախ պետություն, նորմալ պետք է զարգացնենք մեր երկիրը: Կգա մի օր, ու բոլոր հարցերը ուղղակի ձեւաչափով մենք սկզբնապես պահպանելու ենք, լինի դա արտաքին քաղաքական կամ անձնական: Այս ի՞նչ օր ենք ընկել՝ ժեխերն են քննադատում, ու ոչ մեկը չի խոսում: Ո՞վ պիտի մեզ քննադատի, մի մարդ, որ ոչ մի ներդրում չունի՞ այս երկրի համար: Զգիտե՛ք ով կարող է խփել Արցախի արտգործնախարարին, ու ես պիտի բացատրություն տամ, նայեք, լսե՛ք՝ ինչ եմ ասել, նոր խոսե՛ք», - բորբոքված նշել է ԱՀ արտաքին գործերի նախարարը:

Մանրամասնելով՝ Մետաքսե Հակոբյանը նշել է, որ խոսքը «Ջաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանի մասին է, եւ նրանք նաեւ այսօր իրավասու են որոշելու Արցախի բախտն ու ճակատագիրը:

Դավիթ Բաբայանի խոսքով՝ Արցախի բախտն ու ճակատագիրը որոշում է համայն հայությունը, առաջին հերթին՝ Արցախը: «Տիկի՛ն Հակոբյան, անհոգ եղեք, այդ գիծը տանելու ենք մինչեւ վերջ, որովհետեւ իսկապես Արցախի ճակատագրից է կախված համայն հայության ճակատագիրը, եւ ինչ-որ տեղ՝ նաեւ միջազգային հարաբերությունների հետագա ընթացքը», - խոսքը եզրափակել է ԱՀ ԱԾ նախարարը:



ռապես մնում են դատախազային լիազորությունների տիրույթում», - իր խոսքում ասել է ԱՀ գլխավոր դատախազը:

Դավիթ Իշխանյանը հիշեցրել է, որ դեռեւս 2018 թ., երբ «Հայ ազգային կոնգրես» կուսակցության անդամ Չոյա Թադեւոսյանի կողմից կասկածի տակ դրվեց Արցախի տարածքային ամբողջականությունը, ՀՀ-ի Արցախի ԿԿ-ն իրավական գործընթաց սկսեց: «Թեեւ գործընթացը չամբողջականացվեց եւ տիկին Չոյա Թադեւոսյանը միայն ընդհանուր քաղաքական գնահատականներ ստացավ, բայց ներողություն խնդրելու եւ իր կողմից ներկայացված թեզերը վերաշարադրելու, մեկնաբանելու արդյունքում նաեւ զգաստության իրավիճակ ստեղծվեց», - նշել է պատգամավորը՝ կարեւորելով ներկա զգայուն իրավիճակում համապատասխան իրավական քայլեր ձեռնարկելը:

Արձագանքելով պատգամավորի խոսքին՝ Գուրգեն Ներսիսյանը նշել է, որ այն իրավիճակներում, որտեղ իրականում պետք է լինեն քաղաքական արձագանք եւ քաղաքական պատասխաններ, դատախազական գործիքակազմը հանիրավի չպիտի օգտագործվի: Նրա խոսքով՝ իրավիճակը կարող է կարգավորվել օրենսդրական փոփոխություններով եւ նման հայտարարությունների համար քրեական պատասխանատվություն սահմանելով՝ այնպեսով, որքանով դա չի խախտի ազատ արտահայտվելու եւ խոսքի ազատության իրավունքը: «Իսկ նման դեպքերում, երբ խոսքը վերաբերում է անկախ պետության տարածքային ամբողջականությանը, օրենսդիր մարմինն ունի կանխարգելելու եւ որոշակի սահմաններ սահմանելու իրավական հիմնավորում», - ասել է նա:

նում Հայաստան-Ադրբեջան բանակցությունների հետ կապված: «Երբ Ադրբեջանը հրապարակեց բանակցությունների վերաբերյալ 5 կետերը, հայկական կողմը հայտարարեց, որ բոլոր կետերն ընդունելի են՝ ավելացնելով, որ հայկական կողմն ավելացրել է իր կետերը: Արդյո՞ք ԱՀ իշխանությունները կամ դուք տեղյակ եք՝ ինչ կետերի մասին է խոսքը, քանզի այն առ այսօր չի հանրայնացվել», - հարցրել է Մետաքսե Հակոբյանը:

ԱՀ արտաքին գործերի նախարար Դավիթ Բաբայանը շեշտել է, որ այդ հարցերին բազմիցս պատասխանել են, եւ մեզ համար, անկախ ամեն ինչից, անընդունելի է եղել, անընդունելի է եւ անընդունելի է լինելու ցանկացած կարգավիճակ Ադրբեջանի կազմում:

«Հայաստան-Ադրբեջան փոփոխաբերությունները սերտորեն կապված են ադրբեջանադարաբաղյան հակամարտության կարգավորման հետ: Բայց, այնուամենայնիվ, սրանք տարբեր գործընթացներ են, չնայած մեկը մյուսի հետ կապված են: Այս տեսակետից, եթե Հայաստանն ունի Ադրբեջանի հետ հարաբերությունների բարելավման օրակարգ, դրան ինչ-որ տեղ սատարում են նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները: Ես կարծում եմ, որ ցանկացած նորմալ մարդու, նորմալ հայի համար պարզապես անընդունելի, մերժելի է, որ Ադրբեջանի հետ Արցախը որեւէ առնչություն ունենա՝ որպես մեկ ընդհանուր պետություն, առավել եւս՝ ինչ-որ ստորադասային կարգավիճակով», - ասել է ԱՀ ԱԳՆ ղեկավարը: Նրա խոսքով՝ Ազգային ժողովի ընդունած հայտարարությունը, որը պաշտպանել են նաեւ արտախորհրդարանական ուժերը, վկայությունն է այն բանի, որ այս հար-

«Չարթևի՛ր, լա՛ն...». ջահերով երթ Ստեփանակերտում

Հայոց ցեղասպանությանը նվիրված ջահերով երթերն ամբողջ աշխարհում կազմակերպվում են ՀՀ երիտասարդական և ուսանողական միությունների կողմից: Արցախում այն արդեն շուրջ 20 տարի է, ինչ կազմակերպվում է ՀՀ Կրթության երիտասարդական միության կողմից: Այս տարի էս ՀՀ Կրթության երիտասարդական միության նախաձեռնությամբ Ստեփանակերտում 1915թ. Մեծ եղեռնի 107-րդ տարելիցի կապակցությամբ «Չարթևի՛ր, լա՛ն...» կարգախոսով ջահերով է կազմակերպվել, որը մեկնարկել է Ստեփանակերտի Սուրբ Հակոբ եկեղեցու բակից:

Նախքան երթի մեկնարկը, Ստեփանակերտի Սուրբ Հակոբ եկեղեցում տեղի է ունեցել հսկման և խոկման արարողություն, միասնական աղոթք, որից հետո հավատացյալներին իր խոսքն է հղել Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Ս. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը:

«Այսօր ուխտի օր է. ե՛ր եկեղեցական օրացույցով, ե՛ր որպես հայ քրիստոնյա՝ մեր հոգու ուխտն է: Եկեղեցական օրացույցով այսօր սուրբ Հովանու Կարապետի տոնն է: Սուրբ Հովանու Կարապետի անունը կրող թեմի եկեղեցիներում այսօր սուրբ եւ անմահ պատարագ է մատուցվել՝ ի հիշատակ այդ մեծագույն սրբի, որը լույս աշխարհ եկավ՝ հաստատելու նոր օրենք և նոր օրենքի միջոցով Քրիստոսի գալուստը:

Այսօր մենք միասնական աղոթքով եւ խոկումով առ բարձրյալն Աստված աղոթք բարձրացրինք՝ գորհալու եւ ամրանալու, եւ վստահ լինելով, որ Աստված երբեք չի լքում իրեն հավատացողներին: Ներկայիս մեր ժողովուրդը այդ հավատքի մնայուն կրողն է, եւ հոգով, սրտով հավատում է մեր տեր Հիսուս Քրիստոսին: Ծանր օրերի միջով ենք մենք ազգովի անցնում: Սա կարելի է համեմատել Մովսես մարգարեի առաջնորդությամբ Եգիպտոսից դեպի Ավետյաց երկիր հրեա ժողովրդի ելքի հետ: Եթե միասնական են միակամ լինենք առ Աստված, մեր մտածումներով, մեր ապրելակերպով, մեր սրբազան կենցաղավարությամբ կհասնենք Ավետյաց երկիրը վայելելուն: Սա ճշմարտություն է, այնքանով, որքանով մենք լավ գիտենք ինքներս մեզ, լավ գիտենք մեր ներուժը եւ շատ լավ ենք պատկերացնում այն քաղաքականությունը, որ տեղի է ունենում մեր շուրջ: Ուստի մենք ավելի հզորանալու եւ միաբանվելու համար պետք է կարողանանք ինքներս մեզ առաջին հերթին հասկանալ, ճանաչել եւ նոր մեր քայլերը կատարել:

1915թ. մեր հայրերն ու պապերը երագել են հզոր հայրենիք, պետություն ունենալու մասին, եւ այդ երագանքը մենք ենք կյանքի կոչել, մենք ենք, որ կարողացել ենք պետություն ստեղծել եւ այդ պետությունը պահել ու պահպանել: Երջանկահիշատակ Վազգեն Վեհափառ Հայրապետն ասում էր. «Պետություն ստեղծելը հերոսություն է, պետություն պահելը եւ պահպանելը՝ առաքելություն»: Ուստի հերոսություն են արել այն անձինք, ովքեր պետություն են կառուցել, հերոսություն ու առաքելություն ունեն այն անձինք, ովքեր պետք է պահեն եւ պահպանեն այս պետականությունը:

Որպեսզի մենք կարողանանք այս դժվարին օրերն անցկացնել եւ ճիշտ քայլ կատարել, պետք է ունենանք բանաձեռ: Այդ բանաձեռն այն է, որ կարելու ազույն եւ լրջազույն հարցերում պետք է միակամ ու միասին լինենք, երկրորդական հարցերում կարող ենք ինքնուրույնություն ցույց տալ, իսկ ամեն ինչում պետք է առաջնորդվենք հավատքով եւ սիրով: Ահա այս է այն բանաձեռը, որով մենք կարող ենք ճիշտ եւ հզոր քայլ կատարել այս դժվարին օրերին:

Համախմբված աղոթեցինք: Հավատքն է այն գործակող ուժը, որ մեզ միավորում է. առանց հավատքի անձը տկար է: Մենք կարող ենք վստահ ասել, որ հայ ժողովուրդն իր ամբողջ կյանքի ընթացքում հավատացել է իր ճշմարիտ Աստծուն, հոգով, սրտով նվիրվել իրեն, սիրել է իր հայրենիքը, եկեղեցին եւ պատվել իր ծնողներին: Բայց քաղաքականության մեջ հավատք չկա, քաղաքականության մեջ կա շահ, պայքար, քաղաքականության մեջ կա քաղաքականություն:

Մեր հավատքն առ Աստված լինի անմացորդ, մեր սերը առ եկեղեցի՝ նվիրական, պատվենք մեր ծնողներին, սիրենք մեր գավառներին եւ իրապես կկարողանանք ճիշտ քայլ կատարել մեր ապագայի նկատմամբ:

Այս մտածումներով մենք պետք է արթնանանք հոգեւոր թմբիրից, հոգեւոր գարթոնքը կարող է դառնալ մեր միաբանության ներուժը: Իրապես պետք է ասենք՝ գարթևի՛ր, լա՛ն, մենքնմք քեզի, որովհետեւ ահա այս ձեռով է, որ Աստված կպահի մեր ազգը: Այս մտածումներով թող Աստված օրհնի մեզ բոլորիս եւ կարողանանք ուխտի գնալ հավատքով, աղոթքով դեպի մեր նախնիները: Եկեղեցին նրանց սրբազործել է, եւ նրանք մեր ակաջին մշտապես շնչում են, որ այլեւս պետք չէ, որ մենք սայթաքենք»:

Ժամերգությունից հետո բազմահազարանոց երթը Արցախի թեմի առաջնորդ Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի, ՀՀ Կրթության ԿԿ ներկայացուցիչ Արթուր Մոսիյանի, ԱՀ ԱԾ պատգամավորների, պետնախարար Արտակ Բեգլարյանի եւ հոգեւորականների առաջնորդությամբ շարժվել է Ստեփանակերտի կենտրոնական փողոցներով դեպի Ստեփանակերտի հուշահամալիր:

Երթի ընթացքում հնչեցվել են «Ո՛չ թուրքի հետ ապրելուն», «Արցախը սակարկելի չէ», «Ո՛չ մի զինում թուրքերին», «Արդար պահանջ, ոչ մի նահանջ» եւ այլ պահանջատիրական կոչեր:

Ստեփանակերտի Վերածննդի հրապարակից երթին միացել են նաեւ ԱՀ նախագահ Արայիկ Հարությունյանը, ՀՀ Բյուրոյի անդամ Դավիթ Իշխանյանը, ԱՀ ԱԿ քարտուղար Վիտալի Բալասանյանը, ԱՀ նախկին նախագահ Բակո Սահակյանը, գործարար-բարերար Ռուբեն Վարդանյանը եւ պետական այրեր:

Հուշահամալիրում երթի մասնակիցների անունից ՀՀ Կրթության երիտասարդական միության անդամ Հեղինար Գրիգորյանը կոչ հնչեցրեց՝ ուղղված համայն հայությանն ու միջազգային հանրությանը:

«Լրանում է 20-րդ դարի առաջին ցեղասպանության 107-րդ տարելիցը: Այդ ողբերգական ժամանակներից անցել է ավելի քան մեկ դար, մինչդեռ միջազգային հանրությունն ամբողջովին չի դատապարտել այդ ոճրագործությունը, անաչառ իրավական գնահատական չի տվել այդ իրադարձություններին՝ անպատիժ թողնելով հանցագործությունն իրականացնողներին:



Վերջին հիսուն տարիներին երեսուկից ավելի երկրներ ճանաչել են 1915-1922 թթ. Արեւմտյան Հայաստանում կատարված ոճրագործությունները՝ որպես ցեղասպանություն՝ ճանապարհ բացելով պատմական արդարության հաստատման համար, սակայն այդ ամենը բավարար չէ, որպեսզի կասեցվեն մեր օրերում աշխարհի տարբեր անկյուններում մարդկության դեմ սանձազերծվող ռասիստական հանցագործությունները: Անպատժելիությունը պատճառ է դարձել, որ այսօր եւս շարունակվեն հայրությանը հայրենազրկելու պանթուրքիստական ծրագրերը:

2020 թ. սեպտեմբերին Թուրքիայի հովանավորությամբ Արրեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված 44-օրյա պատերազմը Հարավային Կովկասում հայ ժողովրդի նկատմամբ ցեղասպանությունը շարունակելու միտում ունեցող նախահարձակ գործողություն էր: Հազարավոր հայորդիների կյանքի գնով, ծանր տարածքային կորուստներ կրելով, Հայոց բանակի անձնուրաց ջանքերի շնորհիվ, ինչպես նաեւ Ռուսաստանի Դաշնության միջնորդությամբ հաջողվել է կասեցնել հայ ժողովրդի հանդեպ նոր ոճրագործության իրագործումը: Սակայն սահմանային սահրանքների շարունակումն ու հայկական պատմամշակութային արժեքները ոչնչացնելու մոլագար ցանկությունը վկայում են ցեղասպան պետությունների կողմից այդ քաղաքականությունը շարունակելու նկրտումները: Դա այն նույն ձեռագիրն է, ինչ Թուրքիան տարիներ շարունակ կիրառել է Արեւմտյան Հայաստանում: Ստեղծված իրավիճակում Հայաստանի եւ Արցախի հանրապետությունները պարտավոր են պետական մակարդակով հակադարձել հակահայկական սպառնալիքներին եւ հավատարիմ մնալ հայկական զույգ պետությունների կազմավորումն ազդարարող հռչակագրերում ամրագրված իրավաքաղաքական սկզբունքներին՝ վերահաստատելով հայկական Սփյուռքի հետ միասնական պահանջատիրությունը:

Այսօր՝ 2022 թ. ապրիլի 23-ին, Ստեփանակերտում կազմակերպված Հայոց ցեղասպանության գոհերի ոգեկոչման համար ջահերով երթի բոլոր մասնակիցներս կոչով դիմում ենք միջազգային հանրությանը՝ բարձրացնել «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու եւ պատժելու մասին» միջազգային կոնվենցիայի պահանջների կատարման նշանոցը, չդավաճանել համամարդկային արժեքներ կրող Արցախի ժողովրդին, ե՛ւ զգուշացնում, որ Արցախի դեմ ոճրագործություններն անպատիժ թողնելը ամիթ է դառնալու աշխարհի տարբեր անկյուններում մարդկության դեմ նոր ոճրագործությունների իրականացմանը»:

Երբայրական հուշահամալիրում ելույթով հանդես եկել Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդի օգնական Դավիթ Ուրարակիր Փաշայանը:

«Արթո՛ւն եղեք եւ պատրաստ, քանի որ ձեր ուսիք՝ սատանան, մռնչում է աշուճի պես, շրջում է եւ փնտրում, թե ում կուլ տա» (Ա. Պետրոս 5:8):

Սիրելի՛ հայորդիներ, Պետրոս առաքյալի այս կոչը 2000 տարվա հեռավորությունից մշտապես արդիական է բոլոր նրանց համար, ովքեր իրենց համարում են «Լույսի որդիներ»: Հայ ժողովրդի եւ, ի մասնավորի, Արցախի համար փորձություններով ու անորոշություններով լի շրջանում մենք համախմբվել ենք՝ հիշելու ցեղասպանության մեր բյուրավոր նահատակներին, խնդրելու նրանց բարեխոսությունը մեր ազգի համար եւ ամենակարեւորը՝ փորձելու լսել, թե այս պահին ինչ են շնչում նրանք մեր հոգեւոր ակաջին, ինչ պատգամ են տալիս մեզ: Եթե փորձենք համառոտել նրանց կոչը, ապա այն կհնչի այսպես. «Սովորեք մեր սխալներից եւ միշտ արթուն եղեք»:

Այս կոչը արդեն մղում է մեզ մտածելու այն բացթողումների մասին, որոնք ազգին կանգնեցնում են կործանման վտանգի առաջ՝ հավատի եւ բարոյական կյանքի թուլացում, անմիաբանություն ազգային կյանքում, վտանգավոր դյուրահավատություն թշնամու խաղաղասիրական խոստումներին, եւ այս ամենի որպես «չարափառ պսակ»՝ անտարբերություն երկրի բախտի հանդեպ: Այս բոլոր թվարկվածները կային 1915-ից առաջ եւ, ցավոք, կարծես թե ուզում են ծարձակել ներկա ժամանակներում:

Մեր հայրերը, որոշ չափով լավ սերտեցին ցեղասպանության դասը եւ հասկացան պետականություն ունենալու արժեքը, եւ մենք ունեցանք հերոսական Սարդարապատ, Բաշ-Ապարան, Ղարաբաղի խաչ, Արցախյան գոյապայքար՝ կանգնեցնելով հայ ժողովրդին ոչնչացնող կրակե օղակը: Բնականաբար, չարը չի կարող հաշտվել մեր այս արդար պայքարի եւ հաջողությունների հետ, ուստի նորից ասպարեզ նետեց իր վաղեմի փորձված գեղեցիկ՝ մեղքը իր բոլոր դրսեւորումներով, մարդկանց դարձնելով վախկոտ, էսաստը, հաճոյապաշտ, որով եւ ազգային, պետական հարցերի հանդեպ անտարբեր ու միայն սպառող քաղաքացիներ: Այսպիսի հասարակությանը բաժանելը եւ տիրելը դառնում է ամենահեշտ գործը: Մեզ միշտ թուլացրել է ոչ թե մեր հավատքը, ազգային մեր արժեհամակարգը, մեր ընտրած գաղափարականը, այլ դրանց թերի ընկալումն ու գործադրումը: Այս ամենի դառը պտուղները մենք տեսանք 2020 թ. պատերազմի ընթացքում, երբ թշնամին կրկին ցույց տվեց դիմակի տակ թաքնված իր ցեղասպան դեմքը:

Ի տարբերություն 1915-ի, այսօր մենք գտնվում ենք ավելի շահեկան վիճակում, ունենք պետականություն, թեկուզ է վիրավոր, ունենք հսկայական ներուժ ամբողջ աշխարհում, բայց եւ ունենք միաբանության խնդիր, իսկ դրա համար պետք է ազգովի արթնանալ կործանարար անտարբերության թմբիրից, լսել ցեղասպան Թուրքիայի վայրագություններից տուժած մեր ժողովրդի ցավից ծնված օրորոցային երգի կոչը՝ «Չարթևի՛ր, լա՛ն, մենքնմք քեզի...», որը նաեւ իմաստավորում է այսօրվա մեր ջահերթը:

Մենք կոչ չենք անում վրեժի ծարավով լցվել, որովհետեւ վրեժը Աստծուն է, ինչպես պատգամում է Սուրբ Գիրքը (Հոմ. 12:19), եւ վաղ թե ուշ Աստված կհատուցի ամենքին ըստ իրենց գործերի, այլ խնդրում ենք բոլոր հայերին՝ լինել միակամ եւ միասիրտ ազգային բոլոր հարցերում, հայրենասեր լինելուց ավելի լինել հայրենասեր, համախմբվել մեր դարավոր հոգեւոր արժեհամակարգի շուրջ եւ կառուցել ամուր պետություն: Դարձյալ Սուրբ Գիրքն է մեզ ասում, որ եթե մենք հավատարիմ լինենք այս քչի մեջ, Աստված ավելին կտա մեզ:

Ուստի, մշտապես լսելով մեր նահատակների ձայնը՝ մենք պետք է մեր անձնական շահը չգերադասենք հայրենի պետականության շահից, պետք է նախ սիրենք իրար, ապա նաեւ մեր երկիրը, եւ այս պարագայում հաղթանակն իրեն շատ սպասեցնել չի տա:

Հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի»:

Ելույթից հետո Դավիթ Ուրարակիր Փաշայանը ներկայների հետ միասին աղոթք հնչեցրեց առ Աստված:

Չահերթն ավարտվեց ՀՀ ժողովրդական արտիստ Շուշան Պետրոսյանի եւ ԱՀ պետական կամերային երգչախմբի ելույթներով:

Չահերթը երթն այս տարի առավել առանձնահատուկ բնույթ էր կրում՝ կապված այն քաղաքական զարգացումների հետ, որոնք կարող են Արցախը տանել հայաթափման, արցախահայությանը՝ ցեղասպանության: Հենց այս գիտակցումն էր համախմբել բազմահազարանոց երթին: Ստեփանակերտից բացի, «Չարթևի՛ր, լա՛ն...» կարգախոսով ջահերթեր են կազմակերպվել Արցախի գրեթե բոլոր համայնքներում, այսպիսով աշխարհին ցույց տալով, որ Արցախը չի հանձնվել, Արցախը պահանջատեր է:

Կահագն ԽԱՉՍԻՅԱՆ

Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին ջահերով երթեր Հայաստանում և Սփյուռքում

Ապրիլի 23-ին Մեծ եղեռնի 107-րդ տարելիցին նվիրված ջահերով երթեր են կազմակերպվել Արցախի, Հայաստանի գրեթե բոլոր բնակավայրերում և Սփյուռքի հայկական գաղթօջախներում:

Հայաստանում ապրիլի 23-ին «Չարթ-Լի՛ր, լա՛ո...» կարգախոսով ջահերով երթը մեկնարկել է Երեւանի Հանրապետության հրապարակից և ուղղվել դեպի Ծիծեռնակաբերդ: Այս տարի ջահակիրների թիվունքին գծված էր 1992-ին Շուշիի ազատագրողների թիվունքին պատկերված խաչը:

Երթի մեկնարկից առաջ ելույթ ունեցավ ՀՀ Հայաստանի Քերականության ներկայացուցիչ Իշխան Սաղաթեյանը:

«Սիրելի երիտասարդներ, սիրելի հայրենակիցներ:

Այսօր այստեղ ենք՝ հայության անժամանցելի իրավունքները պաշտպանելու, մեր հիշողությանը տեր կանգնելու, Ցեղասպանության զոհերի հիշատակը հարգելու, այլևս երբեք նոր ցեղասպանություն թույլ չտալու համար:

1999 թվականին ՀՀ Դաշնակցության երիտասարդներն առաջին անգամ Երեւանի կենտրոնից ջահերով քայլեցին դեպի Ծիծեռնակաբերդ: Ամեն հաջորդ տարի ջահերով երթի մասնակիցների քանակը բազմապատկվեց:

Այսօր ահա այն վերածվել է համազգային միասնականության երթի:

Այս երթը վերափոխվելով, նոր երանգ, նոր շեշտադրումներ է ստացել հատկապես այժմ, երբ բեկումնային ժամանակ է, երբ գոյութենական վտանգների առջև ենք:

Մենք արձանագրում ենք, որ ՀԻՇՈՒՄ ԵՎ ՊԱՅՄԱՆՔՈՒՄ են համահայկական կարգախոսը վերջին տարիներին ձեռախեղվում է: Փորձ է արվում մեր ժողովրդի արդար պայքարը սահմանափակել գուտ հիշողության ամորֆ ձևակերպումով:

Այս իշխանությունը, կատարելով թուրքական նախապայմանները, ցանկանում է հրաժարվել մեր համահայկական պայքարից, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և իրավունքների պաշտպանության սահմանադրական հանձնառությունից, Արցախից: Հայրենիքի դարպասները ցանկանում է բացել թշնամու առաջ:

Փուչ ու դատարկ են սրանց հավաստիացումները լավ ապագայի, տնտեսական շահի, խաղաղության դարաշրջանի վերաբերյալ:



Թշնամին նույնն է, նույն նպատակներով: Նույն թշնամական թուրք-ադրբեջանական տանդեմն էր, որ 2020-ին Արցախում փորձեց նոր ցեղասպանություն իրականացնել:

Հիմա մեր երթով, այս միասնականության փաստում ենք, որ չեն հաջողելու: Թույլ չենք տալու, որ այս իշխանությունը իր կործանարար քայլերով քայքայի համահայկական մեր ճակատը, մեր անվ-

տանգությունը, պետականությունը, Արցախը, հայոց հիշողությունը: Սա դիմադրության վճռական երթ է:

Այս հրապարակից, Երեւանի սրտից, մեր տասնյակ հազարավոր ջահակիրների, վճռական հայության անունից դիմում են միջազգային հանրությանը՝ սա է հայկական կամքը, հայ ժողովրդի դիրքորոշումը, և ոչ թե փակ դռների ետևում, ցանկացած պետության մայրաքաղաքում, գիշումի պատրաստ Հայաստանի անունից հանդես եկողի լռությունն ու թուրքական պահանջների կատարման պատրաստակամությունը:

Այս հրապարակից դիմում են հայկական Սփյուռքում ապրող, հայկականությունը պահպանող, նախնայաց հիշատակն ու պատգամը վառ պահող մեր միլիոնավոր հայրենակիցներին: Այս ջահերը, տասնյակ հազարավոր հայաստանցիների ներկայությունը փաստում են, մեր իրավունքների պաշտպանությունը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման պայքարը դադար չի առնելու:

Դիմում են Արցախի Հանրապետության մեր հայրենակիցներին: Մեր վճռական ներկայությունը, զինվորագրումը գրավական ու ապացույցն է, որ դուք մեկնակ չեք: Մայր հայրենիքը ձեռքերը չի վազել Արցախից: Սա է հայության կարծիքն ու որոշումը, ոչ թե մի քանի իշխանավորների թուրքական թեգերով հայտարարությունները:

Մենք միասին ենք, մեկ բռունցք, մեկ ուժ:

Վերջապես դիմում են մեր ջահակիր երիտասարդությանը, որոնցից շատերը 2020-ին ջահի փոխարեն գեներն էին բռնել: Դիմում են նրանց միացած մեր տասնյակ հազարավոր հայրենակիցներին, մեր բոլոր քաղաքացիներին:

Չանգը հնչել է. սա նոր Սարդարապատի, նոր Բաշ Ապարանի, նոր գարթոնքի գանգն է: Մեզանից, մեր միասնությունից, վճռականությունից, մինչև վերջ գնալու մեր կամքից է կախված, թե հետագա սերունդներն ինչպես կարտահայտվեն 2020-ականներին ապրածներին մասին:

Կլինենք համարձակ, միասնական, ըմբոստ, մեզ կհիշեն որպես պատմության անիվը շրջած, հաջորդ սերունդներին ապրելու, արարելու հայրենիք փոխանցած սերունդ: Եթե ոչ՝ վախկոտի խարանը բոլորիս շիրիմների վրա է լինելու:

Հանդուրժելու ենք այդպիսի ճակատագիր: Ո՛չ:

Ուրեմն ունենք մեկ ուրի՛ մեզ հետ պայքարի ենք հանում մեր հարեւանին, ընկերոջը, բարեկամին, համագյուղացուն:

Համահայաստանյան զորաշարժ ու դիմադրություն:

Վստահ եմ՝ այն բերելու է հաղթանակ: Երեկ ես հայտարարել եմ՝ գնալու ենք մինչև վերջ: Հեռացնելու ենք աղետաբեր այս իշխանությունը: Վերականգնելու ենք մեր արժանապատվությունը:

Նրանց ուզածն այն է, որ փակենք իրենց առջև Ծիծեռնակաբերդի ճանապարհը, բայց ապրիլի 24-ը այդ օրը չէ, այդ օրը խորհուրդ ունի, այդ օրը ուրիշ նպատակ ունի: Պայքարը շարունակվելու է ապրիլի 25-ից:

Հանուն սրբադասված մեր նահատակների, հանուն Հայաստանի Հանրապետության, Հանուն Արցախի, հանուն հայկական նոր զարթոնքի և հայ ժողովրդի հավերժության՝ տարք ջահը դեպի Ծիծեռնակաբերդ, տար դեպի վերջնական հաղթանակ:

Կեցցե՛ հայ ժողովուրդը:

Ջահերի մասնակիցները երգել են այս տարվա երթի խորհրդանիշ երգը՝ «Չարթ-Լի՛ր, լա՛ո...»-ն, այրել Ադրբեջանի և Թուրքիայի պետական դրոշները, ապա ջահակիրների առաջնորդությամբ շարժվել դեպի Ծիծեռնակաբերդ:

Ապրիլի 23-ին, **Ախալքալաքի** եւ շրջանի տարբեր գյուղերի բնակիչները քաղաքի բերդից ջահերով ուղեւորվեցին դեպի Սուրբ Խաչ եկեղեցի՝ պահանջելով ճանաչման և թուրքապարտել 1915 թվականի Օսմանյան կայսրության կողմից կատարած Հայոց ցեղասպանությունը:

Այսպիսի երթի իրականացումը տարիների ընթացքում ավանդույթ է դարձել Ջավախքի պատանեկան «Չորի Չորյան» միության անդամների կողմից:

Երթը մեկնարկեց Ախալքալաքի բերդից, հարյուրավոր մարդիկ Հայաստանի և Վրաստանի դրոշներով, պահանջատիրական պաստառներով և ջահերով ուղեւորվեցին դեպի Սուրբ Խաչ եկեղեցու բակ:

Ջահերով երթ է անցկացվել նաև **Նիտոմիդայում**:

Հունաստանում Թեսալոնիկահայությունը եւս ոգեկոչել է 1915-ի մեկուկես միլիոն անմեղ զոհերի հիշատակը:

ՀՀ երիտասարդական միության Թեսալոնիկեի «Ս. Թեոփիլյան» խմբի նախաձեռնությամբ «Արիստոտելյան» հրապարակի առջև տեղադրված երիտասարդական տաղավարից ընթացք առավ ժողովրդային բողոքի ցույց դեպի Թեսալոնիկեի թրքական հյուպատոսարան:

Հնչեցված բոլոր ելույթները կազմակերպվել էին ՀՀ Հայ դատի հանձնախմբի համադրումով:

Սիրիայում ջահերով կազմակերպել էր Սիրիայի երիտասարդական միության Կենտրոնական վարչությունը, որին մասնակցում էին Բերիո Հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Ս. Եպիս. Չոպույանը:

Ջահերով Սիրիայի և Հայաստանի գույգ դրոշներով առաջնորդել է ՀՄԸՄ-ի Հայկա Մասնաճյուղի փողերախումբը, գեղարվեստական ղեկավարությամբ Մեր Սուսանի:

Ջահերով Սիրիայի և Հայաստանի գույգ դրոշներով առաջնորդել է ՀՄԸՄ-ի Հայկա Մասնաճյուղի փողերախումբը, գեղարվեստական ղեկավարությամբ Մեր Սուսանի:

Հայկա փողոցները պահանջատիրական կանչերով թնդացին: Շրջանի բնակիչները իրենց պատշգամբներից մոմեր



բռնած զորակցում էին տողանցողներին: **Կանադայում** Բեմբրիջի հայ կենտրոնում տեղի ունեցավ ապրիլյան Մեծ եղեռնի ոգեկոչում, որը կազմակերպել էր Բեմբրիջի Հայ դատի հանձնախումբը:

Հանդիսությանը ներկա էին շրջանի հոգեւոր հովիվը, ՀՀ Կանադայի Կենտրոնական կոմիտեի և Կանադայի Հայ դատի Շրջանային հանձնախմբի անդամները, Կանադայի Հայ դատի գրասենյակի գործադիր տնօրենը, քաղաքական հյուրեր, ՀՀ «Արամ-Դրո» կոմիտեի ներկայացուցիչը, պատկան մարմինների և միությունների ներկայացուցիչներ և Բեմբրիջի տարբեր շրջաններից ժամանած հայորդիներ:

ՀՀ ԿԵՄ-ի «Արամ Մանուկյան» մասնաճյուղի նախաձեռնությամբ, տեղի ունեցավ ծաղկեպսակի գետեղում և մոմավառություն Մուսա Լեռան հերոսամարտի հուշարձանի մոտ:

Լիբանանում ՀՀ Լիբանանի երիտասարդական միության կազմակերպած պահանջատիրական երթն ընթացք է առել Բուրջ Համուդից դեպի Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճար, որին մասնակցել են հազարավոր լիբանանահայեր:

Սիդնեյում ՀՀ Ավստրալիայի երիտասարդական միության կազմակերպած բողոքի ցույցի անդամները պահանջել են վարչապետ Սկոտ Մորիսոնից և կառավարությունից՝ ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

Բազմաժողովրդական պահանջատիրական երթեր ու բողոքի ցույցեր են անցկացվել նաև Ֆրանսիայի **Լիոն**, **Մարսել** և **Փարիզ** քաղաքներում՝ կազմակերպությամբ ՀՀ Ֆրանսիայի երիտասարդական միության:

Պահանջատիրական ջահերով եւ ցույցեր են անցկացվել նաև **Ամստերդամում** ՀՀ Հոլանդիայի երիտասարդական միության, **Ֆրանսիայում** ՀՀ Ֆրանսիայի երիտասարդական միության, **ԱՄՆ** մի շարք համայնքներում՝ ՀՀ Արեւմտյան և Արեւելյան Ամերիկայի երիտասարդական միությունների, **Մեծ Բրիտանիայում** ՀՀ Լոնդոնի «Խանասար» երիտասարդական միության, **Շվեդիայում** Շվեդիայի երիտասարդական միության, **Իրանում** «Ռոստոմ» ուսանողական, **Կիպրոսում** ՀՀ Կիպրոսի երիտասարդական, **Նիդեռլանդներում** Նիդեռլանդների ՀՀ «Գարեգին Նոնե» երիտասարդական, **Արգենտինայում** ՀՀ Արգենտինայի երիտասարդական միության կազմակերպությամբ:

Վահագն ԽԱՉՍՏՐՅԱՆ

Չայը պետք է իր հայրենիքում ապրի. Գլենդելից Մարտունի տեղափոխված Շանթը

Ապրիլի 23-ի երեկոյան Ստեփանակերտում կազմակերպված շահերով երթից հետո, արդեն տարածքի մաքրությամբ էին զբաղված, երբ մի մարդ մոտեցավ 337 գինեանշանով վերնաշապիկներ հագած երիտասարդներին և ասաց, որ չգիտեր, որ Արցախում այսքան դաշնակցականներ կան, ինքն էլ ճանաչում է Շանթին: Նրա խոսքով՝ Շանթը ԱՄՆ-ում «կազինո» (խաղատուն) ուներ, հիմա ընտանիքով ապրում է Արցախի Մարտունի քաղաքում: Ահա այսպիսի լեգենդներ են պատմում խաղատան նախկին կառավարիչ Շանթ Զարչաֆճյանի մասին, որի միջոցով պատերազմի օրերից մինչև այժմ Արցախում բազում բարեգործական ծրագրեր են իրագործվել, և ով կնոջ՝ Մարինեի հետ, մեկ տարուց ավելի է դարձել է Մարտունի քաղաքի բնակիչ, որտեղ մեծացնում են իրենց դստերը՝ Մարալին: «Ապառաժ»-ը հայրենադարձ Շանթ Զարչաֆճյանի հետ զրուցել է Արցախ տեղափոխվելու պատճառների, այստեղ հանդիպած դժվարությունների, դրանք հաղթահարելու ուժի, ապագա ծրագրերի մասին:

- Ի՞նչ է նշանակում դաշնակցականի երդում տալ:
- 5 տարեկանից եղբորս հետ սկսումս անհատական էի գնում, հետո 8 տարեկանում պատանեկանին միացա: Այդ տարիներին շատ լավ վարիչ եմ ունեցել: Գլխավոր վարիչս՝ «Դեպի Չայ» հիմնադրամի (Birthright Armenia) ղեկավար Սեւակ Կաբաչյանը, հիմա ընտանիքով Չայաստանում է ապրում: Հետո 337 երիտասարդական միությանն եմ անդամակցել, մեկ տարի Կենտրոնական վարչության անդամ եմ եղել: Երդում միանգամից չեմ տվել, այլ՝ մոտ 5 տարի առաջ: Ինձ համար լուրջ խոստում էր, պիտի մտածված անեի, քանի որ այդ խոսքերն իր ամբողջ ծանրությամբ եմ ընկալել: Ես ու եղբայրս միասին ենք երդվել:

- Ստացած դաստիարակությունը Մարտունի տեղափոխվելու որոշման մեջ մեծ տեղ ունի:
- Մանկուց ինձ համար շատ կարևոր էին հավասարությունը, բոլորի հետ հավասար վարվելը, համեստությունը: Պատերազմից հետո Մարտունի եկանք ու շփվեցինք այստեղի մեր ընկերների, քաղաքապետարանի աշխատակիցների, բնակիչների հետ: Առաջին աշխատանքս Մարտունի քաղաքի շուրջ 50 նահատակների տներն այցելելը, գորակցություն հայտնելն էր ու ֆինանսապես աջակցելը: Ում հետ ծանոթացա, շատ համեստ, աշխատող մարդիկ էին, որոնք ուզում էին ամեն ինչ արդար կազմակերպել: Նրանք խորհուրդ տվեցին, որ եթե գումարը բոլորին չհերիքի, ինչքան էլ քիչ գումար լինի բոլորին հավասարաբար բաժանեն: Այս մոտեցումն ինձ շատ տպավորեց: Այստեղ ավելի արտահայտված տեսա հավաքական շահը: Տեղացի ժողովուրդն էլ շատ է տանջվել, տուժել: Մյուս շրջանների հետ համեմատած՝ Մարտունի քաղաքին շատ են խփել: Դա իմանալով ու տեսնելով, որ ժողովուրդը համառորեն ուզում է մնալ իր հողի վրա, իր տանը, նորից վերակառուցել քանդվածն ու ավերվածը, շատ հարգեցի:

- Պատերազմից հետո Մարտունիում տրամադրության փոփոխությունն ակտուալ է՞ս՝ դրական առումով:
- Երբ տեսնում ես, որ մեկը նոր բիզնես է բացում, նոր շենքեր են կառուցվում, տեղացի ու դրսի մարդիկ ցանկանում են իրենց ներդրումն ունենալ վերականգնվելու գործում, այդ հանգամանքը հույս է տալիս: Ժողովուրդն էլ կարծես ուզում է, որ այստեղ կյանքը լավանա, փախուստի հնարավորություն չեն փնտրում: Մարդիկ չեն ասում՝ փող տուր, որ տոմս առնեմ, ասում են՝ փող տուր, որ շերտից սարքեմ, դպրոցի համար քիմիայի, ֆիզիկայի պարագաներ գնեմ: Դա քաջալերող է, չեն ասում՝ այստեղ անապահով է, թշնամու քթի տակ եք, մի ձեռով մեզ 33-ում տեղավորեք: Պետք է քաջալերվի այդ ժողովուրդը: Աշխարհասիյուն հայությունը պետք է Արցախի, Չայաստանի թիկունքին լինի, որ պահենք Արցախը, Սյունիքը: Եթե Արցախը, Սյունիքը չպահենք, կամաց-կամաց կհասնեն Երևան:

Դժբախտաբար, ղեկավար իշխանությունն այնպիսի տեղ է հասցրել, որ կարծես Չայաստան՝ նշանակում է միայն Երևան, կամ Չայաստանը հայության, հայերի հայրենիքը չէ: Հնարավոր է այդ մարդիկ հայերեն են խոսում, բայց կանխածում եմ, որ հայ են: Կարծես թե Չայաստանը մի երկիր է, հյուրանոցի նման բացել են ու տարբեր ազգեր կարող են գալ վայելել: Ես ազգային խտրականություն չունեմ այլ ազգերի նկատմամբ, բայց նրանք իրենց երկիրն ունեն, մենք մի փոքր կտոր հող ունենք, և ոչ մեր պատմությունն են պաշտպանում, ոչ էլ մշակույթը, լեզուն:

- Հե՞տո էր ինտեգրվել նոր վայրում: Ի՞նչ դժվարությունների հանդիպեցիք այստեղ:
- Լեզուն, տեղական բարբառը հասկանալն ամենադժվարն էր: Բայց հիմա մեծամասամբ հասկանում

եմ, կամ գոնե այդպես եմ կարծում: Օրինակ, մայրս լսելով տեղացու հետ իմ խոսակցությունը, ոչինչ չի հասկացել: Ինձ հետ շփվելով՝ մի քիչ ավելի գրական են խոսում, որը հեշտացնում է: Բայց հիմա բավական շփվել եմ, որ բարբառը հասկանամ: «Ինչպե՞ս», «ի՞նչ», «տի՛ն», «տի՛վեր»՝ առաջին օրը այս բաները չէի հասկանում, բայց հիմա բավականին հասկանում եմ:

- Սոցիալական ցանցերում շատ զգացմունքային են արձագանքում քաղաքական գործիչների էլոյթներին, հակահայ արտահայտություններին, նախքան պատերազմն է՞լ էիր այդպես:

- Երբ այս փոփոխությունները եղան, ես չէի հետեւում, թե ով է այս անձը, ինչ անցյալ ունի: Ես զբաղված էի ԱՄՆ մեր համայնքի երիտասարդների, պատանիների առօրյայով, այնտեղի Չայ դատի հարցերով, տեղյակ չէի՝ ով է, ինչ է: Երբ լուր ստացա, որ ժողովուրդը շարժում է սկսել, ժողովուրդն ընտրել է այս մարդուն, ժողովուրդը հոգնել է կաշառակերությունից, ասացի՝ լավ: Ոչ թե ուրախ էի, այլ պարզապես չէի ճանաչում: Հետո տեսա, որ նրանք ավելի շատ ջանք են թափում օտարների ուզածներն անելու համար, քան թե հայկականը պահպանելու ուղղությամբ: Եթե իրենց մնա, Երևանը չես կարող տարբերել Լաս Վեգասից:



Մենք ինքներս մեզ խաբել ենք, որ հայը ստեղծագործ է, գրագետ է: Հասել ենք մի կետի, որ երկրի մեծամասնությունը չի կարողում: Նրանց տեղեկատվության աղբյուրը ֆեյսբուքյան ինչ-որ գրառում կարող է լինել՝ առանց փաստերի: Մինչև այստեղ գալս դա ինձ համար պարզ չէր, ես 15-16 տարի Չայաստանում չէի եղել: Մշակութային շատ առանձնահատկություններ ունենք, բայց ինքներս մեզ չենք ճանաչում: Մարդկանց մոտ կյուրթապաշտություն է առաջացել: Եթե մենք մեր պատմությունը սերտեինք, կիմանայինք, որ իրավունք չունենք եսասեր, եսակենտրոն լինելու: Եթե մենք հավաքականորեն չաշխատենք, կմորթվենք, կանհետանանք: Հանգստյան օրերի իրավունք չունի հայը:

- Իսկ ի՞նչ եք ես տեսնում:

- Ամեն մարդ ինքնուրույն կարող է իրավիճակ փոխել: Ամեն մարդ փոփոխություն պիտի պահանջի: Ամենահասարակ բաներից սկսած, օրինակ՝ սրբավայրերի մոտ աղբ թափելը, դա ամեն մարդ կարող է պահանջել: Եթե այդքանը չենք կարող անել, դա ցույց է տալիս, թե ինչ ենք զգում մեր հողի ու երկրի նկատմամբ: Խրամորթի դեպքերի ժամանակ Մարտունու գյուղերից մեկում պահակություն էին անում Ավետարանոցի բնակիչները, որոնք Ստեփանակերտում են մնում: Ասացին՝ մենք մեր օգուղը չկարողացանք պահել, գոնե հիմա ուզում ենք օգնել, որ դուք Ձեր գյուղը պահեք: Տունը կորցրած մարդն ավելի է հարգում հայրենիքը, ավելի է արժեւորում: Դժբախտաբար, պիտի կորցնես, որ արժեքն իմանաս:

- Կհիշե՞ք Արցախում Ձեր անցկացրած ամենատխուր ու ուրախ պահերը:

- Հայաստանում, հայրենիքում ամեն օրը լավ օր է: Ուրախանում եմ, երբ մեր հայրենակիցները դրսից միանում են մեզ: Միայն բաժակածառերով հայրենիք չեն սիրում: Դա ամենաուրախացնողն է, նաեւ ամենախոտորն էլ դա է: Մեկ տարի է՝ այստեղ եմ, գիտեմ, որ աշխարհում մոտ 10 մլն հայ կա, քանի՞ մարդ է եկել Չայաստան, Արցախ, փորձել ինչ-որ բան անել: Շատ քիչ է թվել: Ես չեմ սիրում, որ Մարտունում միակ Սփյուռքից եկած, «յուրահատուկ» մարդն եմ, ես ցավում եմ դրա համար: Իմ կարծիքով՝ հարյուրավոր, հազարավորներ պիտի գային: Հրաշք բնություն, հրաշք երկիր, մշակութային ինչպիսի գանձեր: Նույնիսկ Չայաստանում այսքան մարդու հետ եմ ծանոթացել, որ գոնե մի անգամ Արցախում չեն եղել:

- Արցախում թշնամուց այսքան հեռավորության վրա ինչպես ես պատկերացնում ընտանիք, երեխա ունենալը: Սփյուռքում ձուլվում ես, այստեղ ֆիզիկական անվտանգության հարց չկա:

- Նույնն է, որովհետեւ Սփյուռքում ինքնությունը պահելու, գոյութենական պայքար է: Միշտ պայքար է, կամ այստեղ, կամ այնտեղ: Ֆիզիկական վտանգ կա, բայց ամեն տեղ էլ ֆիզիկական վտանգ կա: Եթե մեր հողը, երկիրն արժեք չունենար, ոչ մեկը չէր ցանկանա նվաճել: Վտանգը ցույց է տալիս, որ շատ արժեքավոր երկիր ունենք: Եթե վտանգ կա, հիմա թողնենք գնա՞նք, թափառականի կյանքով ապրե՞նք, օտարության մեջ ձուլվե՞նք: Նիկոլ Դումանը Արցախից հասել է Արեւմյան Չայաստան: Այդ մարդիկ ինչեր են արել հանուն իրենց եղբայրների: Եթե երկիր ենք ուզում, ծրի չէ: Ոչ մեկը մեզ ձրի երկիր չի տալու, ոչ էլ իրենները իրենց երկիրը ձրի վերցրին ու ոչ էլ առանց վտանգի են պահում: Ամեն տեղ էլ վտանգ կա: ԱՄՆ-ում պատերազմ չկա, բայց այնտեղ էլ փողոցային անվտանգության խնդիր կա:

- Ինչպե՞ս ես պատկերացնում Արցախը 15-20 տարի հետո:

- Պետք է աշխատենք: Եթե աշխատենք, լավ կլինի: Կարծում եմ, որ դրա հնարավորությունը կա, շատ խելացի սերունդ ունենք: Եթե լավ աշխատողին գնահատեն, այլ ոչ թե բարեկամական կապերով աշխատեն, կարող ենք շատ առաջ ընթանալ: Եթե Չայաստանի, Սփյուռքի, Արցախի հայությունն աշխատի իր ուժերի ներածին չափով, շատ լավ կլինի: Բայց պետք է ուղղությունը ճշտել: Պետք է մեր ազգային արժեքները՝ պատմությունը, մշակույթը, եկեղեցին գերազույն լինեն: Պետք է բոլորս համաձայն լինենք, որ թուրքը, ազերին թշնամի է, հակառակորդ չէ: Չես կարող թշնամուն ասել ոչխար, պիտի ճիշտ գնահատես:

- Դուք Ձեզ այստեղ տեսնո՞ւմ եք 20 տարի հետո:

- Իմ արմատները Արեւմտյան Չայաստանի Տիգրանակերտից են: Իմ հեռանկարը Արեւմտյան Չայաստանը, իմ պապերի տունն ունենալն է: Հիմա ինձ Արցախում եմ տեսնում, Արցախն էլ չեմ տարբերում Չայաստանից: Մեկ հայրենիք ունենք: Այստեղ ենք՝ մարտունեցի ենք, այստեղ ենք ցանկանում արարել, ստեղծել:

- Ի՞նչ գաղափար է ոգետրում Ձեզ:

- Հիմա ուրախ եմ, որ Չայաստանի տարբեր վայրերում ժողովուրդը վերջապես քնից արթնացել ու փողոց է իջել: Ինձ համար ամենաոգետրողը դա է, որովհետեւ առանց Չայաստանի ներկա ղեկավարության փոփոխության, մենք ապագա չենք ունենալ: Նրանք հետապնդում են այնպիսի գաղափարներ, որոնք կկործանեն հայ ազգը, հայ դատը և յուրաքանչյուր հայի համար արժեք ունեցող հիմնասյունները: Տեղասպանության ենթարկված մարդկանց հետ բանակցում են, ժողովուրդին ասում՝ ընկերական կապեր ստեղծենք: Վաճառականի այս մտայնությունը՝ կարծես տես, անձնական շահերի հետապնդում, պետք է փոխվի: Եթե 33 կառավարությունը չփոխվի, ձեռք չկա, ամեն ինչ կկործանվի:

Վերջին շրջանի այս շարժումը ինձ մեծ հույս է տալիս: Մենք հայրենիքի մի փոքր կտորն ենք, եթե իրար չօգնենք, տիրություն չանենք, Արցախն էլ կգնա, Սյունիքը, Լոռին էլ կգնա: Ի՞նչ կմնա: Երկիրը կտոր-կտոր կտանք թշնամուն: Բայց երկիր չունենալով՝ այլ երկրի դրոշի տակ ապրել հնարավոր չէ: Այդպիսի ժողովուրդներ չեն մեր շրջապատում, նրանք չեն ցանկանում նորմալ հարեանություն, այլ միայն՝ մահ: Խաղաղություն՝ մուրաղով չես ստանա: Մեկը ինձ հիշեցրեց, որ Արեւմտյան Չայաստանում Տեղասպանությունից հետո խաղաղություն կա, որովհետեւ հայը չկար, շատ էլ խաղաղ էր: Դժվար օրեր են, կամ ձեռքներս ծալած կնստենք, կամ կարող ենք աշխատել: Պետք է աշխատել:

- Հայրենիքը հնարավոր է հեռվից սիրել:

- Հնարավոր է եւ ոչ: Կարող ես հեռվից սիրել, բայց ամեն հայ պիտի ծրագիր ունենա, ամեն մարդու ծրագիրը պետք է լինի Չայաստան վերադառնալ, ապրել իր հայրենիքում: Ամեն մարդու կյանքի պայմանները տարբեր են: Չեմ ասում Սփյուռքում հայրենասեր չեն, հայ չեն, ոչ: Սփյուռքում ապրող շատ մարդիկ շատ ավելի հայրենասեր են, քան Չայաստանում ապրողների մի մասը: Բայց, վերջիվերջո սերունդները ձուլվում ու անհետանում են, ու իրենց սիրած երկիրն էլ ի վերջո կանհետանա, եթե իրենց ֆիզիկական ներկայությամբ ներդրում չկատարեն: Լավ, վատ՝ երկիր ունենք, որն ապրելու ամենալավ տեղն է: Հայը պետք է իր հայրենիքում ապրի: Երկիրն իր գավակների կարիքն ունի, իր գավակներն էլ իր երկրի կարիքն ունեն:

Ոչ ոք չի կարող Արցախը բանտարկել. Արցախում էին ՀՕՍ-ի Կենտրոնական վարչության անդամները

Ապրիլի 26-29-ը Արցախում էին Հայ օգնության միության Կենտրոնական վարչության անդամները, ՀՕՍ-ի Հայաստանի շրջանային վարչության ատենապետուհին: Արցախ այցը մեկնարկել է Ստեփանակերտի գինվորական պանթեոնում Արցախյան պատերազմների զոհերի հիշատակին հարգանքի տուրք մատուցելով, այնուհետև հետագա օրերին ՀՕՍ-ուհիները հանդիպումներ են ունեցել ԱՀ նախագահի, ԱՀ Անվտանգության խորհրդի քարտուղարի, ՀՀ Արցախի ԿԿ անդամների, ՀՕՍ-ի Արցախի միավորի վարչության անդամների հետ, այցելել ՀՕՍ-ի Ստեփանակերտի, Խնձրիստանի և Աշախի «Սոսե» մանկապարտեզներ: Հայաստան և Արցախ կատարած այցի մանրամասների մասին «Ապառաժ»-ը գրուցել է ՀՕՍ-ի ԿԿ ատենապետուհի Նաիրի Տերտերյանի հետ:

Կորոնավիրուսի համավարակով պայմանավորված՝ Կենտրոնական վարչության նիստերի գերակշիռ մասը կայացել են առցանց: ՀՕՍ-ի ԿԿ ատենապետուհու խոսքով՝ հայրենիքում կայացել է Կենտրոնական վարչության երրորդ կենդանի լի-ազումար նիստը: «Մեկ տարուց ավելի է՝ նպատակ ունենք գալ, բայց կորոնավիրուսի հետ կապված տարբեր երկրների արգելափակումների պատճառով չուզեցինք փոքրամասնությամբ գալ, այլ որոշեցինք ամբողջական կազմով այցելել: Չնայած ես անձամբ ԿԿ հանձնարարականով պատերազմի օրերին եմ անցյալ տարի եղել եմ Հայաստանում: Մեր նպատակն էր՝ պատերազմից հետո գալ հայրենիք եւ անձամբ տեսնել իրավիճակը: Ոչ միայն տեսնել, այլ մասնակից լինել ժողովրդի կյանքին ու օգտակար դառնալ»,- նշել է Նաիրի Տերտերյանը:

Երեւանում ԿԿ անդամները ապրիլի 22-

ին մասնակցել են Հայրենիքի պաշտպանի վերականգնողական կենտրոնի լաբորատորիայի բացման արարողությանը, որը կրում է Արցախյան 3 պատերազմների մասնակից, 44-օրյա պատերազմում զոհված, բժիշկ-ազատամարտիկ Նորայր Շահբազյանի անունը: Կենտրոնի կահավորման, նոր սարքավորումներ ձեռք բերելուն աջակցել է նաև ՀՕՍ-ը, իսկ վերջերս նվիրել է նաև ռեստոգեն սարքավորում:

«Այնուհետև ԿԿ կազմը երեւանում մասնակցեց ՀՀ-ի ԿԿ-ի համար ԿԿ կազմակերպած ջահերով երթին: Ապրիլի 25-ին այցելել են ՀՀ ԿԿ-ի Ախուրյանի Մոր եւ մանկան առողջության կենտրոն: Ինչպես նաև, որ առաջիկայում Ախուրյանի համար նոր լուրեր կհայտնենք: Այցելեցինք նաև Գյումրիի Ծիրվանյան կենտրոն, հանդիպեցինք մի շարք ՀՕՍ-ուհիների հետ»,- Հայաստանում անցկացրած օրերի մասին մանրամասներ է հայտնում ՀՕՍ-ի ԿԿ ատենապետուհին:

Հաջորդ հանգրվանը Արցախում էր: Դեռևս Արցախյան առաջին պատերազմի տարիներին բազմաթիվ անգամ Արցախ այցելած Նաիրի Տերտերյանը համեմատականներ է անցկացնում այն տարիներին հետ. «Ես Արցախում առաջին անգամ

եղել եմ 1992թ., Շուշիի ազատագրումից մի ամիս անց: Առաջին այցը Արցախ սկսվեց ռմբակոծությամբ, քաղաքը ռմբակոծեցին: Իսկ այս անգամ, անկեղծ ասած, ավելի վատ իրավիճակի էի սպասում: Դրսից նայելով՝ ասում էին շատ խոչընդոտներ, դժվարություններ կան: Իսկ իրականում ճանապարհը երկար էր, բայց հաս-



նելուց հետո դրանք երկրորդական թվացին: Ստեփանակերտում լինելով, տեղի ՀՕՍ-ուհիների հետ շփվելով, երեխաների հետ շփվելով, զգացումներս նույնն են: Արցախը դեռ ազատ է, ոչ ոք չի կարող Արցախը բանտարկել, նույնիսկ եթե նրանք Շուշիում են»:

Խոսելով այցի ընթացքում առաջացած նոր գաղափարների մասին, ԿԿ ատենապետուհին նշում է, որ ՀՕՍ-ը սկզբից որոշեց պատերազմից անմիջապես հետո գումար հասցնել Արցախ, որովհետև այդ օրերին դրա կարիքը կար: «Հայ օգնու-

թյան միությունն այստեղ ունի մանկապարտեզներ, ունի այլ ծրագրեր, բայց մենք ուզում ենք արմատապես օգնել ժողովրդին, ցույց տալ, որ մենք կարող ենք ձեզ նեցուկ կանգնել եւ իրավիճակը փոքր-ինչ թեթևացնել: Այո, նոր ծրագիր կա, որի մասին շուտով կհայտարարենք: Ուզում ենք բոլոր խնդիրները պարզել, հետո հայտարարել: Համոզված եմ, որ ժողովրդի արձագանքը դրական է լինելու»,- ասում է նա:

Պատերազմի հետեւանքով Արցախում գործող ՀՕՍ-ի 8 «Սոսե» մանկապարտեզներից 4-ը մնացել են օկուպացված տարածքներում: Նաիրի Տերտերյանը չի բացառում նոր մանկապարտեզների կառուցման հնարավորությունը: «Քննարկում ենք մեր մանկապարտեզների ցանցը ընդլայնելու հարցը, մասնավորապես որ տարիանվածների համար նոր բնակավայրեր պիտի կառուցվեն: Մենք այդպիսի երկու տարբեր համայնք այցելեցինք: Հույս ունենք, որ կառավարության հետ խորհրդակցելուց հետո մի քանի մանկապարտեզներ կբացվեն Արցախում տեղահանված երեխաներին մեր «Սոսե» մանկապարտեզներում ազգային դաստիարակություն տալու համար»,- ասում է նա:

ՀՕՍ-ի կենտրոնական վարչության անդամներն Արցախից հեռանում են կարոտի զգացումով: «Իրականում, չեմ ուզում թողնել Արցախը: Որքան էլ հեռու լինեմ, Արցախն իմ սրտի մեջ է, եւ հուսով եմ, որ շուտով նորից կգամ: Արցախցին հեռվից խրախուսվելու կարիք չունի, միշտ եղել է ուժեղ: Մենք գիտենք, որ մեր հողը ապահով է, որովհետև արցախցին կա»,- եզրափակում է ՀՕՍ-ի ԿԿ ատենապետուհին:

S. ԱՄԱՋԱՆՅԱՆ

ՀՕՍ-ը պատերազմին մասնակից ուսանողների կողքին

Ապրիլի 27-ին Ստեփանակերտում կայացել է Հայ օգնության միության «Լավագույն ուսանող» ծրագրի պարգևատրման արարողությունը: Արարողությանը ներկա էին ՀՕՍ-ի Կենտրոնական վարչության անդամները, ՀՕՍ-ի Հայաստանի և Արցախի վարչությունների ատենապետուհիները, Արցախի պետական, Շուշիի տեխնոլոգիական, Մեսրոպ Մաշտոց եւ Գրիգոր Նարեկացի համալսարանների ներկայացուցիչներ, հյուրեր, ուսանողներ: 1998թ. Արցախում գործող այս ծրագրով 100 ԱՄՆ դոլարի չափով դրամական պարգևի տեսքով խրախուսվում էին սոցիալապես անապահով, սահմանամերձ բնակավայրերում ապրող այն ուսանողները, որոնք ուսման ընթացքում լավագույն առաջիմություն են ցուցաբերել: Նախորդ երկու տարիներին ծրագիրը չի գործել, իսկ այս տարի ՀՕՍ-ի Կենտրոնական վարչությունը որոշել է ծրագրի շահառու դարձնել 44-օրյա պատերազմին մասնակցած 105 ուսանողների:

«Իր գոյության ավելի քան մեկդարյա պատմության ընթացքում ՀՕՍ-ը իր համագործակցող գործընկերությամբ ու նպատակներով հանդիսացել է Հայրենիք-Սփյուռք կապն ամբողջացնող ու զարգացնող հզոր կառույց: 1992թ. մուտք գործելով Արցախ, ՀՕՍ-ը իրականացրել է մի շարք ծրագրեր եւ նպաստել կրթության, մշակույթի, առողջապահության, սոցիալական ու տնտեսական այլ ոլորտներում բարձր առաջընթացի գրանցմանը: Այդ տարիների ընթացքում Արցախում իրականացված ծրագրերն աչքի են ընկել հասցեականությամբ, բարձր արդյունավետությամբ ու բացառիկ հաշվետվողականությամբ, իսկ դա ՀՕՍ-ի կատարած աշխատանքների լավագույն գնահատականն է»,- իր բացման խոսքում նշել է ՀՕՍ-ի Արցախի միավորի ատենապետուհի Լիլիթ Մարտիրոսյանը:

Նրա խոսքով՝ տարիներ շարունակ նեցուկ կանգնելով կրթական համակարգին «Լավագույն ուսանող» ծրագիր ձեռնարկով, Հայ օգնության միությունը նպաստել է, որ ունենանք կրթված ու լայնախոհ երիտասարդներ: ՀՕՍ-ի Արցախի միավորի ատենապետուհին շնորհակալություն է հայտնել ՀՕՍ-ի վարչությանը Արցախին նեցուկ կանգնելու, Արցախի պետական, Շուշիի տեխնոլոգիական,

Մեսրոպ Մաշտոց եւ Գրիգոր Նարեկացի համալսարանների ռեկտորատների եւ ուսանողների հետ տարվող աշխատանքների գծով պատասխանատուներին՝ ուսանողների ընտրության հարցում օժանդակելու համար: «Սիրելի ուսանողներ, պատերազմի դաժան օրերին դուք դարձել էիք հայրենիքի հրաշունչ գինվորներ եւ անձնուրացաբար պայքարում էիք մեր հայրենիքի ամեն թե՛ղ հողի համար՝ գիտակցելով, որ ձեր թիկունքում թողել էք ընտանիք, քույր, մայր, հարազատներ: Ավաղ, ձեր ընկերներ-

նողների հայտնելու համար: «Դուք ոչ միայն Արցախի քաղաքացիներն եք, այլ նաև Արցախի ամենալավ գինվորները: Ձեզ խոստանում եմ, որ Հայ օգնության միությունը իր բոլոր անդամներով 27 տարբեր երկրներում միշտ նեցուկ է կանգնելու Արցախի ժողովրդին թե՛ առաջնագծում, թե՛ խաղաղ օրերում»,- ասել է նա:

Նա տեղեկացրել է, որ 1995թ. Սփյուռքում ՀՕՍ-ը կրթաթոշակներ է հատկացնում համալսարան ընդունված կամ արդեն սովորող ուսանողներին, բայց հայրենիքում այդպիսի ծրագիր չկա: Ուստի, ՀՕՍ-ը, կարելու էր ուսումը, մասնագիտություն ստանալը որոշեց՝ հայրենիքում՝ Հայաստան, Արցախ, Ջավախք, գնահատել ուսանողներին եւ փոքր նվերով ոգեւորել՝ շարունակելու ուսումնառությունը:

Միջոցառմանը ներկա էր նաև ՀՀ Արցախի ԿԿ անդամ Ալյոնա Գրիգորյանը: Կարելու էր ծրագրի իրագործումը, Ալյոնա Գրիգորյանը կոչ է արել ուսանող տղաներին նորից կյանք վերադառնալ: «Ճիշտն ասած, պատերազմից հետո շատ դժվար է մեքենա ուղղել եւ ապրել, պատերազմից հետո չի լինում ուրախանալ: Եթե մի ժամանակ ես դա որպես խոսք էի ընկալում, ապա պատերազմից հետո ես դա զգացի: Պատերազմից հետո տղաները չեն կարողանում ուրախանալ: Ես ինքս էլ կորուստ ունեմ ընտանիքում, բայց խնդրում եմ ձեզ՝ նորից վերադարձեք կյանք, շարունակեք ապրել, ստեղծել: Այս պահից շատ ծանր է, բայց տեսնելով բոլորիդ հպարտ դեմքը՝ վստահ եմ, որ այս փորձությունն էլ է Արցախը հաղթահարելու: Շնորհակալ եմ, որ դուք կաք, որ Արցախում եք եւ Արցախով եք»,- ասել է ՀՀ Արցախի ԿԿ անդամը:

Միջոցառման վերջում ծրագրի իրագործման համար շնորհակալական խոսքով հանդես են եկել Արցախի պետական համալսարանի ուսանողների հետ տարվող աշխատանքների եւ կարիերայի բաժնի ներկայացուցիչ Լիլիթ Մարգարյանը, Մեսրոպ Մաշտոց համալսարանի պրոռեկտոր Ալիսա Բաղդասարյանը եւ Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ուսանողների հետ աշխատանքների տարման գծով բաժնի ղեկավար Արեւիկ Հարությունյանը:

S. ԱՄԱՋԱՆՅԱՆ



րից շատերը չվերադարձան, նրանք ընկան մարտի դաշտում՝ արյամբ սրբացնելով Մայր հողը: Հավերժ փառք նրանց: Չմոռանաք, որ մեր հայրենիքի ապագան ձեր ձեռքերում է: Մարդու եմ ձեզ ուսման մեջ եւ ապագա տարիներին նոր ձեռքբերումներ է հաջողություններ: Համոզված եմ, որ ձեր ներուժն ու մասնագիտական կարողությունները հետայսու նույնպես կծառայեն մեր հայրենիքի շենացմանը եւ սահմանների հուսալիորեն պաշտպանությանը»,- ասել է Լիլիթ Մարտիրոսյանը:

ՀՕՍ-ի Կենտրոնական վարչության ատենապետուհի Նաիրի Տերտերյանը վարչության անունից նշեց, որ հպարտ են Արցախում գտնվելու եւ փոքրիկ նվերով իրենց շնորհակալությունը հայրենիքի պաշտպան ուսա-

Քաղաքային իշխանության դիմաց կան մի շարք ծառայած խնդիրներ. Ստեփանակերտի փոխքաղաքապետ Ս. Ղուլյան

Արցախի սիրտը՝ մայրաքաղաք Ստեփանակերտն աշխարհին հայտնի է իր մաքրության ու ջերմ ընդունելությամբ: Պատերազմի ընթացքում Ստեփանակերտը եւս ավերածություններ է ունեցել, որոնք շատ արագ վերականգնվել են, եւ այսօր օտարի աչքերով դժվար է տեսնել ու հավատալ, որ ոչ վաղ անցյալում այստեղ պատերազմ ու ավերածություն էր:

Ստեփանակերտն այսօր երկրորդ տուն է դարձել մեր բազմահազար տեղահանված քաղաքացիների համար: Մայրաքաղաքում բնակչության թվի ու նորակառույց բազմաբնակարան շենքերի թվի աճին զուգահեռ ավելացել են նաեւ սոցիալ-կենցաղային ու տեխնիկական խնդիրները, որոնց լուծման ուղղությամբ տարվող աշխատանքների մասին «Ապառաժ»-ը գրուցել է Ստեփանակերտի փոխքաղաքապետ Սամվել Ղուլյանի հետ:

- Պարոն Ղուլյան, պատերազմից հետո տեղահանված քաղաքացիների մի մասը հաստատվել է Ստեփանակերտում: Որքանո՞վ է ավելացել Ստեփանակերտի բնակչության թիվը:

- Այո, պատերազմից հետո տեղահանված եւ Արցախ վերադարձած բնակչության մեծ մասը հաստատվել է Ստեփանակերտում, ինչի արդյունքում Ստեփանակերտում բնակչության թիվն ավելացել է ավելի քան 25 տոկոսով:

- Ստեփանակերտում մարդկանց թվի աճի հետ պայմանավորված՝ աճել է նաեւ մեքենաների թիվը, ինչի արդյունքում հաճախակի են դարձել խցանումները, ինչպես նաեւ մեքենաների կայանման խնդիրներ են առաջանում հատկապես կենտրոնական փողոցներում: Ի՞նչ աշխատանքներ են կատարվել այս ուղղությամբ:

- Իսկապես կա նման իրողություն: Բնակչության թվի աճի հետ կապված՝ նաեւ մեքենաների թիվն է շատացել քաղաքում, որի պատճառով առաջանում են ե՛ւ խցանումներ, ե՛ւ ճանապարհների ոչ պատշաճ սպասարկում, երթուղիների խնդիրներ: Այս ուղղությամբ ձեռնարկվում են քայլեր: Մասնավորապես, Իսակովի եւ Մաշտոցի փողոցներում կատարվել են մայրերի կտրտման եւ կայանատեղիների կառուցման աշխատանքներ, ինչի շնորհիվ ճանապարհի թողունակությունը բարձրացել է: Նախքան պատերազմը պատվիրել էինք քաղաքի գլխավոր հատակագիծ, որը նաեւ պետք է տրանսպորտային կոմունիկացիաների եւ հանգույցների տեղաբաշխվածության ու ճանապարհների լայնացման խնդիրները լուծեր: Պատերազմից հետո այդ գործընթացը դեռեւս կանգնեցված է, սակայն հետագայում քաղաքի համաչափ զարգացման համար նաեւ այս հարցը պետք է լուծվի: Այսօրվա դրությամբ, քաղաքային իշխանության դիմաց կան մի շարք ծառայած խնդիրներ, այն է՝ պատերազմից հետո լուծել մարդկանց սոցիալ-կենցաղային բազում խնդիրներ, բնակարանաշինության խնդիր: Դեպի Արեշ եւ դեպի Աջափնյակ բնակելի թաղամասեր են նախագծվում, որն ապահովելու է ծայ-

րամասային թաղամասերի զարգացում, քանի որ աշխատելու են կոմունիկացիաներն ու ենթակառուցվածքները, տանսպորտային հանգույցները: Ամեն դեպքում, քայլեր ձեռնարկվում են եղածին զուգահեռ նաեւ ծայրամասային թաղամասերի բարեկեցության բարձրացման ուղղությամբ:

- Քաղաքի կենտրոնական մասերում ի՞նչ ընթացակարգով է բազմահարկ շենքերի կառուցման թույլտվություն տրվում՝ նկատի ունենալով, որ քաղաքի կենտրոնն արդեն իսկ ծանրաբեռնված է:

- Հիմնականում քաղաքի առաջին եւ երկրորդ գոտիներում թույլտվություններ բաց տարածքներում չեն տրվում, իսկ կառուցվողները կառուցվում են հին շենքերի տեղում: Նման մեկ-երկու դեպք կա, իսկ մնացած դեպքերում քաղաքի առաջին գոտին չի ծանրաբեռնվում:

Նոր կառուցվող բազմաբնակարան շենքերում նախագծային պահանջ է՝ ունենալ ապաստարան կամ նկուղ սանիտարական նորմերին համապատաս-



խան: Հնարավորության դեպքում 2 կամ 3 հարկանի կայանատեղիների հարցն է հաշվի առնվում, քանի որ քաղաքի զարգացման հետ կապված՝ արդեն ավտոկայանատեղիների խնդիրն օրհասական է դառնում:

- Ստահոգության առարկա է 8-րդ դպրոցի խաչմերուկի վրա 14 հարկանի շենքի կառուցումը, այն պարագայում, որ այդ խաչմերուկը ամենաբանուկ հատվածն է, հատկապես առավոտյան՝ դպրոցի բացման ժամերին: Ինչպե՞ս է լուծվելու այդ հարցը:

- Իմ կողմից նշված՝ քաղաքի առաջին գոտում դեպքերից մեկը հենց այս մասում ի նկատի ունեի:

Շենքի նախագծման ու կառուցման հետ կապված նախագիծը քննարկվել է ճարտարապետական խորհրդում: Տվյալ հարցերն այդտեղ քննարկվել են, ելուժուտի հարցեր որոշակի չափով լուծվել են: Ծիշտ է, շենքը սպասարկման քիչ տեղ ունի, սակայն այդ հարցը կայանատեղիների հաշվին ճարտարապետը փորձել է լուծել, իսկ դպրոցամերձ տարածքներում երթուղիները կարգավորում են ե՛ւ լուսացույցները, ե՛ւ ճՈ աշխատակիցները:

- Արդեն իսկ քաղաքում կա ջրի մատակարարման հարց, հատկապես՝ կենտրոնական հատվածներում, որը սուր արտահայտված էր անցնող ամառվա օրերին: Այդ նոր շենքերի կառուցման պարագայում ջրամատակարարման եւ ջրահեռացման դժվարություններ չե՞ն առաջանալու:

- Ջրամատակարարման հետ կապված, անցած տարի ամռանը աննախադեպ շոգ եղանակով պայմանավորված՝ քաղաքում ջրամատակարարման խնդիրներ ունեցանք, որից հետո երկրի իշխանությունները նախաձեռնեցին Ստեփանակերտ-Պատարա ջրամբարի կառուցումն ու ջրատար խողովակների հասցումը մինչեւ Ստեփանակերտ: Առաջին փուլը պետք է ավարտվի ամռան կեսերին: Քաղաքում առատ տեղացած ձյունը հույս է տալիս, որ ամռանը խոնավության հաշվին, հնարավոր է, ջրի խնդիր չենք ունենա: Ինչ վերաբերում է բազմահարկ շենքերին, ապա կա լուծում. տեղադրվում են պոմպեր, որոնք ջուրը հասցնում են բարձրադիր կետեր: Մենք բոլորս ենք մտահոգված:

որ բնակչության թվի աճի հետ կապված՝ կարող է ջրային ռեսուրսների խնդիր առաջանա, սակայն, ամեն դեպքում, ունենք տեղահանված բնակչություն, որոնց պետք է ապահովել բնակարաններով, որոնք կառուցվում են քաղաքի տարբեր հատվածներում: Հիմնականում ջրամատակարարման համակարգը կախված է տեղումներից եւ խոնավության աստիճանից: Քաղաքը սնուցող գետերն այս պահին բարար չափով ջուր են մատակարարում քաղաքին, եւ տեղացած տեղումները, կարծում եմ, կապահովեն մինչեւ նորակառույց ջրագծի վերջնական համակարգի շահագործումը:

Ջրահեռացման հետ կապված խնդիրը բաց ընթացող կոյուղագծերն են, որն ընդգրկված է մեր ծրագրերում, եւ, եթե

պատերազմ չլիներ, քաղաքաշինության նախարարության հետ համագործակցելով արդեն պետք է քաղաքից 2-3 ճյուղ կենտրոնացված կոյուղիներ կառուցվեր: Այս պահին այն բաց թափվում է Թարթառ գետ եւ հոսում:

- Քաղաքի բնակչության ավելացմանը զուգահեռ, ի՞նչ վիճակում է մի շարք ծառայությունների պատշաճ իրականացումը, հատկապես՝ սանմաքրման աշխատանքները: Արդյո՞ք պատկան մարմինները հասցնում են կատարել այդ աշխատանքը:

- Սանմաքրում համայնքային ոչ առետրային կազմակերպությունն իր գործունեությունը կատարում է ամեսորյա ռեժիմով: Նախքան պատերազմը քաղաքից դուրս հանվող աղբի ծավալները՝ պատերազմից հետո, բնակչության թվի հետ կապված, կրկնակի ավելացել է: Ունենք տեխնիկական պարկի հագեցվածության խնդիր: Մեքենաները հիմնականում սովետական արտադրության մեքենաներ են, որոնք շատ մեծ դժվարությամբ են պահպանվում, եւ մեծ դժվարությամբ ենք աղբը տեղափոխում քաղաքային աղբանոց: Հարցը կառավարությանն ենք ուղղել, որպեսզի ֆինանսական միջոցներ հայթայթեն՝ սանմաքրման տեխնիկական պարկը թարմացնելու, քաղաքը մշտապես մաքուր պահելու համար:

- Հաշվի առնելով ներկայիս քաղաքական իրավիճակը, որում հայտնվել ենք մենք պատերազմից հետո, եւ նկատվող զարգացումները, ի՞նչ աշխատանքներ են իրականացվել նկուղների մաքրման եւ կահավորման ուղղությամբ:

- Նկուղների կահավորման հարցը կառավարության եւ փրկարար ծառայության իրավասության ներքո է, սակայն բնակչահագործման ընկերության կողմից պարբերաբար մաքրման աշխատանքներ են իրականացվում նկուղներում, տեղ-տեղ մասնակի վերանորոգումներ, էլեկտրաֆիկացում, բայց հարցն ավելի շատ քաղաքաշինության ոլորտում պետք է դիտարկել եւ միանգամից կոմպլեկտ վերանորոգման աշխատանքներ սկսել, որպեսզի ունենանք պատշաճ ապաստարաններ:

Կահագն ԽԱՉՍՏՐՅԱՆ

<p>Ցավակցական</p>  <p>ՀՀԳ Արցախի կառույցի անունից մեր խորին ցավակցությունն ենք հայտնում հավատարիմ դաշնակցական ընկեր Դավիթ Առուստամյանի հարազատներին, բարեկամներին եւ ընկերներից՝ իրենց կրած անդառնալի կորստի համար: ՀՀԳ Արցախի կենտրոնական կոմիտե</p>	<p>Ցավակցական</p>  <p>ՀՀԳ Արցախի կառույցի անունից մեր խորին ցավակցությունն ենք հայտնում դաշնակցական ընկեր Գագիկ Մարտիրոսյանին եւ բոլոր հարազատներին՝ իրենց կրած ծանր կորստի՝ Գոհար Մարտիրոսյանի մահվան համար: ՀՀԳ Արցախի կենտրոնական կոմիտե</p>
<p>Հայտարարություն</p> <p>Կորել է Քրիստինա Ալբերտի Գրիգորյանի 2006 թվականին Ստեփանակերտի հ.3 միջնակարգ դպրոցի կողմից տրված հիմնական կրթության վկայականը: Համարել անվավեր:</p>	<p>Հայտարարություն</p> <p>Կորել է Գայանե Ալբերտի Գրիգորյանի 2004 թվականին Ստեփանակերտի հ.3 միջնակարգ դպրոցի կողմից տրված հիմնական կրթության վկայականը: Համարել անվավեր:</p>